

891.99

U-49

ԱՆԻՔԵՆ ՄԵԼԻՔԵԱՆ

5423
0-45

Հայոց բանական

ՀԱՅ ԿԱՄԱՒՈՐԻ
===== ՅՈՒՃԵՐԻՑ



(Թարգմ. Թեան. ձեռագրից)

891.99
Մ-49

Թ. Ե. Ա. Խ. Ա.

Տպարան «ՄԱՍԻՆԻ», Լորիս-Մելիքեան փ., Հե 22.


1917

6 NOV 2011

591.39

Մ=417

ՍՈՒՐԵՆ ՄԵԼԻՔԵԱՆ



ՀԱՅ ԿԱՄԱԿՈՒՐԻ
—
— ՅՈՒՃԵՐԻՑ

1005
21941



Թ. Բ. Յ. Լ. Ի. Ս.

Տպարան «ՄԱՄՈՒԻԼ», Լոբիս-Մելքեան փ., № 22.

1917

27.06.2013

43143

ՃԱՆԱՊԱՐՀԻՆ

— Թող ամեն մարդ պատրաստ լինի. վաղը,
առաւօտիան, մեկնում ենք:

Ուժեղ և հեղինակաւոր ձայնով արձակւած
այս հրամանը՝ ընդհանուր ցնծագին ուրախու-
թեամբ ընդունւեց մեր ընկերների կողմից։ Զմեռ-
ւայ այդ օրը, ամենքը հաւաքւած էին մի մեծ
քարտանսարայում, իրենց հրամանատարի շուրջը,
որին պաշտում էին. և հիմտ, որ մեկնելու էին,
իւրաքանչիւրը ձեռնարկեց իր զբաղմունքին,
ամեն մէկը վագեց՝ մեկնումի իր վերջին պատ-
րաստութիւնները աւեսնելու։ Մէկը ճերմակեղէնն
էր լւանում, ուրիշները վրանն էին ծալում,
ձիերն էին բերում, մաքրում էին հրացանները,
ոմանք իրենց խուրջիններն էին կապում, ուրիշ-
ները թամբերն էին կարգի բերում. և ամբողջ
այդ աշխատանքը կատարւում էր հրամանատա-
րի ուշադիր և բարեացակամ աչքի առաջ, որ
յանձնարարութիւններ էր անում, խորհուրդներ
էր տալիս՝ մէկից միւսի մօտ անցնելով, ցոյց

7714-87

տալով թէ ինչպէս պէտք է անել, սովորեցնելով
այն ամենը, ինչ նրան թերագում էր իր երկա-
րամեայ կուի և կեանքի փորձառութիւնը:

Վերջապէս պիտի մեկնէինք: Արդէն շատ
երկար սպասել էինք մեկնելու դէպի իզդիր:
Ռազմաբեմում գտնւող բանակի լնկերներին միա-
նալու անհամբերութիւնը մեզ խորասուզել էր
տեսդագին սպասումի մէջ Մեր միջն կային
վիրաւորներ, որոնք նոր էին ապաքինւել. ու-
ժիշներ դեռ նոր էին կամաւոր գրւել և առաջին
անգամն էին կուի դաշտերը ճանապարհուում. և
ամենքն էլ միակ ցանկութիւն, միակ շտապողա-
կանութիւն ունէին—կուել թիւրքերի դէմ: Նո-
րեկների միջն նկատուում էին՝ ամերիկանայեր,
ուռմանահայեր, բուլգարանայեր, որոնք իրենց
գործից ու ծնողներից հեռացել էին՝ կամաւո-
րական շարքերը մասնելու համար. Ֆրանսիայից
Շլէյշարիայից, Պետրոգրագից ու Մոսկւայից
ուսանողներ, որոնք ինքնաբերաբար արձագանք
էին տւել կոչին, և ի մի խմբւած, սերտ միա-
ցած՝ գնում էին այնտեղ, դէպի հայրենիքը, որը
պէտք էր ազատել:

Յաջորդ օրը, որոշւած ժամին, ամեն մարդ
ոտքի վրայ էր. մի քանի ըոպէ յետոյ, արդէն
անցնում էինք գլխաւոր ծառուղիից դէպի ուազ-
մաճակատն առաջնորդող ճանապարհը: Դէս ու
դէն մի քանի կրպակներ բաց էին այս վաղ ժա-

մին, և դեռ ևս քնաթաթախ խանութպանը կը ը-
պակի շէմքից «բարի երթ» էր մաղթում մեր յե-
տեկից. Հազւագէպ ճամբորդներ մօտենում էին
և մեր ձեռքը սեղմում. կարելի էր կուահել այն
հպարտութիւնը, որ նրանք զգում էին՝ դիտելով
իրենց կամաւորների գնացքը:

Արդէն դուրս էինք եկել ճանապարհի վրայ
և քաղաքի վերջին աների առաջից անցնում էինք,
երբ հանդիպեցինք մի պառաւ կնոջ, կրւած իր
տարիքի բեռան տակ, մի փոքրիկ աղջկայ ձեռ-
քից բոնած: Նրա հագուստից կարելի էր հաս-
կանալ, որ գաղթական է՝ Մշոյ շրջանից: Տես-
նելով զինուորներին, որոնք գնում էին դէպի իր
երկիրը, նա խաչակնքեց, և ընկճող վշտի դրոշ-
մը կըող այդ դէմքի բերնի անկիւնում, մի
փոքր, հազիւ նկատելի, ուրախ ժպիտ գծագր-
ւեց: Իսկ երեխան տեսնելով այդ զինւած ձիա-
ւորներին՝ վախեցաւ: Կարծեց, թէ սրանք էլ
նման են նրանց, որոնք եկան իրենց գիւղն ու
սպանեցին իր մայրիկին:

— Մի վախնա, լաօ, մի լա. սրանք մերն
են, մեր կամաւորները, ասաց պառաւ կինը.
Հըս զինայ, նրանք ազատեցին տատիդ և շաքար
տւին քեզ:

Արևը մայր էր մտնում, երբ իզդիրի առա-
ջին աղօտ լոյսերն երևացին:

* * *

Զիւն է գալիս: Զիերը մեծ դժւարութեամբ
են առաջանում ձիւնապատ գետնի վրայ: Ամեն
ինչ լուռ է, կասես՝ երկիրը մեռած լինի— ոչ մի
ապաստարան: Սարերը կանգնած են վեհաշուք,
և ամպերը սպիտակացնում են նրանց ու ձևա-
փոխում՝ ծածկելով կատարները, կամ չափա-
զանց երկարելով՝ նրանց՝ երևակայական ուրիշ
գագաթներով: Վայ թէ շփոթես ուղղութիւնը—
կորած ես, որովհետեւ չէ կարելի նոյնիսկ վերա-
դառնալ եկած ճամբով: Քամին ձիւնի մեծ շեր-
տով աւլում է ձիերի ոտքի դրոշմը, և մեր գը-
նացքի ամեն մի հետք անմիջապէս ջնջւում է:

Այժմ մօտ ենք քրդական մի գիւղի, ուր
որոշում ենք գիշերել՝ ձիերին ժամանակ տալու,
որ հանգստանան ու կազդուրւեն: Բայց մի քա-
նի անքուն ժամերի դադարից յետոյ—չէ կարե-
լի վստահել քիւրդի հիւրասիրութեանը—կըկին
ճամբայ ենք ընկնում: Ազօթարանը սկսում է
բացւել, և քամին հանդարտում է: Այժմ մեր
շուրջը տարածւում է չափազանց լեռնոտ մի
երկիր, և մեր ճանապարհը բարձրանում է դէպի
պսպղուն ձիւների բնագաւառը:

Թէպէտ արել ծագեց, բայց բարձր սարերի
անողոք ցուրտը թմրեցնում է մեր մասներն ու
այլում կաշին: Մեր ձիերը, իրար յետելից,

հնդկական շղթայ կազմած, դանդաղօրէն հետե-
ւում են տանջալից արահետին:

Ահա խոր ձիւնի առաջին շերտը: Նրանից
խուսափում ենք մի աւելորդ պտոյտ տալով:
Բայց շուտով մի ուրիշն է գալիս նրա յետելից.
պէտք է անցնել սրա վրայով, որովհետեւ այլ
ճամբայ չկայ: Ձիերը վարանում են խրխնջա-
լով, ոտքով շօշափելով, զգուշութեամբ առաջա-
նալով: Յանկարծ զգում եմ, որ գետինն ինձ
կուլ է տալիս: Իմ «քուռակի» առջևի երկու
ոտքերը խրւեցին մինչև կուրծքը. կենդանին
չարչարում է, խելայեղ սահում է, նորից ոտքի
կամացնում կրկին ու կրկին ընկնելու համար:
Միւսներն աւելի լաւ դրութեան մէջ չեն, պէտք
է հանդարտեցնել նրանց, օգնել, քարշ տալ:
Ամեն ըովէ նրանք թաղւում են մինչև փորը:
Երբեմն ամբողջ ժամեր են հարկաւոր մի վերատ
կտրելու համար:

Այժմ համարեա բլրի գագաթն ենք համել.
սաստիկ բուքը, որ կատաղի փշում է, մեզ վայր
է ձգում գրեթէ, և ստիպւած ենք անազին նա-
խազգուշութիւններ ձեռք առնել՝ անդունդը չը-
գահավիժւելու համար:

Եթէ դժւար էր եղել վերելքը, վայրէջքն
աւելի դժւար անցաւ: Մեր ձիերը նախ ծառա-
նում են, մերժում են առաջանալ և յետոյ սա-

հումեն և որպէսզի փորձանք չպատահի, հարկադրւած ենք իշնել և ձեռքով առաջնորդել ձիերին:

Սրդէն մի քանի ժամից ի վեր առաջանում էինք, երբ ձիւնի խոշոր փաթիլների միջից, որոնք մտրակում էին մեր դէմքը, յանկարծ մեր առաջ երևացին մի քանի տներ— Խնումն էր:

Խնումը գիւղաքաղաք է, որի բնակչութեան մեծ մասը, պատերազմից առաջ, հայերն էին. նպաստաւորւած բնութիւնից՝ նա ձգւած է ձորերի մէջտեղ և շրջապատւած խոր գահավէժներով: Մի քանի դար առաջ մի ապառաժի վրայ շինւած հին բերդը ծածկում է քաղաքի մի մասը, որի տակից մի գետակ է հոսում: Թիւրքերը, իրենց «ազնիւ» սովորութեան համաձայն, մեր խմբի մօտենալուն պէս քաղաքը պարպելով՝ կրակի էին տւել նրան, բայց հրդեհը հարկաւոր արագութեամբ չէր ծաւալւել: Այն սակաւաթիւ բնակիչները, որոնք ազատւած էին կոտորածից, սարսափելի մի սով էին անցկացրել, և ամեն տեղ աչքի էր ընկնում քաղցի կերպարանքը, որ կարծես հենց աների միջից դուրս էր նայում:


Երբ պատրաստեց հայ ցեղի բնաջնջման ծրագիրը, և գաւառական կառավարիչները համապատասխան հրամանը ստացան, կոտորածը սկսւեց մանրակրկիտ խնամքով և մեթոդով:

Տեղւոյն «գայմագամի» հրամանով, թիւրքերը հազար հայ հաւաքեցին ու նրանց ուղար-

կեցին Գիւմգիւմի ուղղութեամբ, Խնուսի և Մշոյ կէս-ճանապարհին, զինւորական մի կարիք պատրւակելով: Բայց կարաւանը, որին ընկերակցում էին ժանդարմները, զօրախմբեր ու քիւրդեր, հեռու չդնաց: Հազիւ դուրս եկած քաղաքից, մի սրտակեղեք տեսարան տեղի ունեցաւ— տղամարդկանց անջատեցին կանանցից ու երեխաներից, կողոպտեցին և պատահացին, մինչ կանայք հեծկլտում էին, լաց էին բարձրացնում, ճչում էին: Յետոյ կանանց ու երեխաներին գետը թափեցին:

Բայց երբ երկրորդ խումբն ոտքի հանեցին, կանայք երկիւղ կրելով նախորդների վիճակին ենթարկելուց, ժանդարմների առաջը նետւեցին, ծնկաչոք քարշ եկան՝ թախանձելով ասպետական թիւրքերին չսպանել իրենց ամուսիններին ու իրենց զաւակներին:

Բայց այնտեղ էլ հոսեց արիւնը...



Մ Ա Խ Ե

Մուշի առումը, որ կատարւեց մեր խըմ-
բի ձեռքով, մի անյայտ պատճառով, ոչ մի ան-
դամ չյայտարարւեց ոչ թերթերում և ոչ էլ պաշ-
տօնական հաղորդագրութիւններում, և երբէք
չիմացւեց, թէ ինչպիսի գժւարին հանգամանք-
ներում և ինչպիսի արիութեամբ էր, որ հայ կա-
մաւորները մտան Մուշ:

Խնուսի անկումից յետոյ, թիւրքական բա-
նակը յետ քաշւեց բաւական արագ՝ անդադար հա-
լածւելով ու ճնշւելով մեր հեծելազօրքից: Գտնւե-
լով փորձառու և կտրիճ հարիւրապետների ղեկա-
վարութեան տակ՝ մեր ձիաւորները յոդնութիւն
չեին զգում. դիշեր ու ցերեկ թշնամուն հե-
տապնդելով՝ թիւրք զօրամասերի թիկունքն էին
անցնում և խուճապի մատնում նրանց, ոչնչաց-
նում նրանց ուազմամթերքը, արգելում նրանց
պաշարի հայթայթումը, հեռաւոր և վտանգաւոր
հետախուզութիւններ կատարում՝ օրերով զատ-
ւած լինելով մեր գլխաւոր ոյժերից, երեւալով
ամեն տեղ և շարունակ, և մեծ սարսափ պատճա-
ռելով թշնամուն:

ԹԵՂԵՐՔԱԿԱՆ ՀԱՄԻՈՒՅՆԱԿՐՈ ՔԻՑ ԱՆՊԱՄ ԷՒՆ

համարձակում կռւի բռնւել մերոնց հետ'նախա-
դասելով փախչել, և կամ միաժամանակ տմար-
դի կերպով կոտորելով հայ անզէն ազգաբնակու-
թիւնը:

Իբր նշանաւոր ձիաւորներ՝ մերոնք սխրագործութիւններ էին կատարում—անժամը ձիու վազած ժամանակ նրա վրայ էին թռչում, գետնից առարկաներ էին վերցնում, ձիու կողքից էին կախւում, մէջքին կանգնում, նշան էին ձգում ամենաանսովոր դիրքեր առած, ձիու վրայ պառկելով, յետ դառնալով,—և այդ ամենը ձիու արշաւի ժամանակ։ Զիերն էլ հրաշշալի վարժեցւած էին և կանգ էին առնում սահճի մի պարզ ձնչումով։

Զորբով գիւղի — Մուշից մօտ 30 վերստի
վրայ — զբաւումից յետոյ, թիւրքական հաճանջը
փոխւեց իսկական խուճապի, վախենալով մեզ
միացած կազակներից, որոնց թիւրքերը համա-
րում էին անզութ, և սոսկումով համակւած մեր
հեծելազօրքի առաջ, որ նրանց վրայ գրոհ էր
տալիս մերթ սրածելով, մերթ նրանց վրայ
կրակելով մառւցերները, որոնցից գնդացիրի կրակ
էր բացւում՝ շնորհիւ այդ ոէւուերի ինքնաշարժ
ու արագ հարւածի, թիւրքերը փախան դէպի
Մուշ, ժամանակ իսկ չունենալով պայթեցնելու
իրենց յետեւմ մնացած եփրատի քարէ կա-
մուրջը, Մեր հեծելազօրքն այնչափ լաւ տարաւ

և արագ կատարեց իր գործը, որ նոյն գիշերը, Լաբինցի կազմակերի ընկերակցութեամբ, նրա հետախոյզ խումբը հասաւ մինչև Մշոյ քռները:

Ամենից առաջ քաղաք մասնելու բախուը վիճակից մաս առաջի հարիւրեակի խուերին: Նոյն բոպէին թիւրքա յետնապահ զօրքը, որ դիրք էր մտել աներում, հրացանաձգութիւն սկսեց: Միայն թանձը մշուշի շնորհիւ էր, որ Մշոյ ոստիկանապետը, ժանդարմիներն ու գերմանական կարմիր Խաչի քոյրերը հսարաւորութիւն ունեցան փախուստ տալ քաղաքի հիւսիսարկեան կողմից:

Ամեն հետապնդումն անհնար էր, և քաղաքի ջարդը կազմակերպողներին ու Մշոյ դաշտում ահեղ կոտորածը տարածողներին կարելի չեղաւ տալ իրենց արդարացի հատուցումը:

Բայց ինչ տիրալի վիճակում գտանք Մուշը: Սասունի լեռների ստորոտում գտնող այս քաղաքը, որի մի մասը մտնում է մի խոր ձորի մէջ և որի միջով հոսում է որընթաց գեար, եղերւած ու շրջապատած է անթիւ անհամար ծառերով: Քաղաքի երկու կողմերում, բլուրների վրայ, երկարում են պարտէզները, ամեն մէկում մի փոքր սնակով, ուր Մշոյ հարուստները գնում էին անցկացնելու ամառայ տաք ամիսները:

Քաղաքի կենտրոնում բարձրան ում են եր-

կու մզկիթ, որոնցից մէկը բոլորովին նորաշէն, միւսն աւելի հին է և մաւրիկեան ոճով, բաւական, հետաքրքրական ներքինով:

Օրիգինալութիւնից զուրկ չէ քաղաքի միջից զիգզագներով բարձրանալը—շարունակ վերելքներ ու վայրէջքներ են: Թիւրքական թաղամասը, որի փողոցները նեղ են, օձապտոյտ և աղտոտ, ու ըսկելեան քաղաքի իսկական տիպն է: Շուկան, որի միայն հետքերն են մնացել այժմ, որպինեան թիւրքերը նահանջելիս կրակի էին մատնել նրան, գուտում է քաղաքի ճիշտ կենտրոնում: Խանութները շատ փոքր, սև ու կեղտոտ, շարքով իրար էին յաջորդում և նմանուում էին վանդակների:

Ցածլիկ, քարաշէն աների շէմքի մուտքի մօտ խոշոր մահիկներ էին նկարած, որպէսզի լաւ որոշվի տնատէրի ինչ ազգութեան պատկանելլ: Երկարկանի էին հասարակական մի քանի շէնքեր—պոսար, կառավարչի բնակարանը, ժանշանքերի առաջական սիրուն և ընդարձակ գարմերիան և բաւական սիրուն և ընդարձակ մի զօրանոցը՝ կառուցւած քաղաքի մուտքի մօտ:

Եթէ քաղաքի թիւրքական թաղը շատ չէ տուժած, հայկական թաղամասը, ընդհակառակը, բոլորովին ամայացւած է: Մի քանի առանձին տներ չեն, որ տուժել են, այլ ամբողջ թաղը, այսինքն՝ քաղաքի կէսը, որ պարունակում էր մօտ յիսուն հազար բնակիչ: Ամեն ինչ հիմնա-

յատակ էր արւած մեթոդիկ խնամքով, և աեղ տեղ քար քարի վրայ չէր մնացած:

Հայկական երեք եկեղեցիներից միայն մէկն
էր դեռ կանգուն մնացել, և այդ այն պատճա-
ռով, որ թիւրքերը նրան ուզո՞ւմ թերքի պա-
հեստի էին վերածել. միւսներն այրւած ու
քանդւած էին: Ամեն տեղ աւերակ էր, ամեն
տեղ, ուր ընկնում էր մեր ակնարկը, տեսնում
էինք դժողակ մի տեսարան—այդ ողբերգական
յիշողութիւններն ինձ համար ընդմիշտ մնացին
մի մղձաւանչ՝ սարսուազդեցիկ տեսիներով: Ամե-
նուրեք մեռածներ, կմախքներ, ամեն տեղ աւե-
րածի անօդուտ շղթայազերծում, և ինչ որ
խնայել էր այդ վայրենիների սուրը, այն էլ
կրակն էր մոխիր դարձրել:

Ես շրջում էի Մշոյ մասորդների մէջ, երբ
պատահեցի լեռներում կոտորածներից ազատւած
փախստականների: Նրանք հաւաքւում էին քա-
ղաքը, ցըիւ տրւած մի հօտի կենդանիների
նման, որոնց բնազդը վերադարձնում է համա-
կեցութեան: Վատարանդի իրենց գիւղերից, ան-
պատսպար, անզգեստ, մտամոլոր, քաղցից ու
յոգնութիւնից մահամերձ, ողբալի դրութեան
մէջ էին: Ազատւելով կոտորածներից, հեռու
թիւրքական եաթաղանից, նրանք դատապարտ-
ւած էին սովամահութեան:

Մեր գնացքն էին դիտում՝ պայծառ գոյնե-

ըով, կարմիր ու կապոյտ, ցնցոտիներ հագած
կանայք, իրենց սև աչքերով, որոնք փայլում էին
նրանց մթագոյն և խիտ մազերի տակ: Համա-
րեա տղամարդ չկար նրանց միջև, բացի մի
քանի ծերերից, որոնց անշուշտ արհամարհել էին
թիւրքերը: Գրեթէ մերկ երեխաները կմախքնե-
րի էին նմանւում. այսքան սոսկալիօրէն նիհար
էին, որ կարելի էր այդ չորացած փոքրիկ մար-
մինների ոսկորները համրել: Նրանց ամեն օր
հաւաքում էին Մշոյ շրջաններից: Այս թշւառ
որբերը, որոնց գտնում էին թոնիրի մէջ պահ-
ւած և կամ անսւաղ դեգերելիս՝ իրենց
սպանւած ծնողներին փնտրելով, աւելի նման
էին վայրենի կենդանիների, քան մարդկային
արարածների: Նրանց դէմքն արտայայտում էր
այն խրոնիքական երկիւղը, որ խորունկ դըռշմ
էր թողել նրանց վրայ. կարծես՝ նրանք դեռ
ապրում էին իրենց տեսած վայրագութիւնները,
և մասնկական ամեն ուրախութիւն սեռած էր
նրանց մէջ:

Անհար էր այս աեսարանները դիտել առանց խորին յուզման, մանաւանդ երբ լսուում էին բորբիկ, ձիւնի մէջ մոլորւած այդ որբերի հեծեծանքները:

— Օղոքմացէք, մենք խայ ենք, կը սեռնինք...
Մենք ամեն կարելին անում էինք այս
թշւառներին ազատելու համար՝ նրանց հետ բա-

ժամելով մեր ամբողջ պաշարը, որ շատ քիչ էր,
և հացի վերջին կտորը նրանց հետ կիսելով:

Հայ կամաւորն այստեղ էլ ցոյց տւեց իր
վեհանձնութիւնն ու անձնուրացութիւնը:

Ես հեռանում էի, որ այլևս չտեսնեմ այդ
ճնշող աեսարանը, երբ իմ ընկեր Տիգրանն ու
ես լսեցինք նախ մի խուլ հեկեկանք, հեծկլտան-
քով ընդհատւող մի հառաչանք և վերջի վերջոյ
մի ամենայուսահատ ողբ ու կոծ, որ ուղղակի
պատառուում էր իմ սիրտը: Յետ գարձայ և
տեսայ մի մանկահասակ աղջիկ, որ նստած մի
տան մօտ, լաց էր լինում: Մօտեցայ և նկա-
տեցի, որ նա գրաւիչ գեղեցկութիւն ունէր:
Նրան հանդարտեցնելուց յետոյ, իմացայ անունը,
բայց հասկանալի պատճառով չեմ յայտնում.
Նա Ղըզլաղաջ գիւղիցն է: Նրա ծնողները
սպանւած էին, իսկ եղբօրը թիւրքերն էին տա-
րել իրենց հետ:

— Քեզ ի՞նչպէս են ողջ թողել, քոյրիկ,
հարցըի զարմացած: Մի աւելի խոր հեծկլտուք
պատասխանեց իմ հարցումին, նկատեցի, որ նա
պայքարում է մի բանի դէմ, որ չէր ւզում
խոստովանւել:

Ես հիացմունքով էի դիտում նրա տժգոյն
դէմքը, վիզը պատած շագանակագոյն մազերը,
գեղեցիկ ու աչքերը, նուրբ մատները, նրա ամ-


բողջ մարմիկ վրայ տարածւած հմայքը, երբ
Տիգրանը քաշեց իմ թկից:

— Եկ, ասաց նա, տեսմում ես, որ ամա-
չում է խոստովանւել, թէ իր գեղեցկութիւնն է
փրկել իրան: Անտարակոյս մի թիւրք սպայ պա-
նել է նրան և չարաչար վարւել նրա հետ:

Շարունակեցինք ճանապարհը, որ գեռ ոճիր
էր շնչում: Դէպի քաղաքի ծայրամասը գնալով,
մի տան կտուրից, որ իշխում էր քաղաքի վրայ,
տեսանք այդ ամբողջ քանդւած ու աւերւած
քաղաքի սրտաճմլիկ պատկերը:

Մեր սիրտը տիրութիւնից ճնշւած, ցած
ճայնով խօսակցելով, կարծես մահամերձի մնա-
րի մօտ լինէինք, բանեցինք վերադարձի ճանա-
պարհը, երբ պատահեցինք մի ծերունի հայի,
պարհը, երբ պատահեցինք մի ծերունի հայի,
որի անունը գժրախտաբար մոռացել եմ: Գտնւե-
լով քաղաքի մի աղջեցիկ բէկի պաշտպանու-
թեան տակ և ականատես վկայ լինելով կոտո-
րածներին, մեր խնդրանօք, մանըամասներ տւեց
վայրագութիւնների նկատմամբ:

Նախ առաջնորդեց մեզ գէպի մի տան աւե-
րակները, որ պատկանելիս է եղել մի հարուստ
հայի: Թիւրքերը մտել են նրա տունը, բռնել
նրան և մեղաղը իրը լրտես: Այդ ամենը միայն
պատրւակ էր նրան ենթարկելու համար այնպի-
սի տանջանքի, որ գերազանցում է ամեն խժդիու-
թիւն, ինչ կարող է հնարին երեակայութիւնը:



Նրանք նախ կտրեցին ականջները, յետոյ քիթը, յետոյ ծոծրակը կտրելով՝ լեզուն հանեցին, և գտնելով, որ այդքան տանջանք բաւական չէ՝ աչքերը հանեցին։ Այդ բոլոր նողկալի գաղանութիւնները կատարւեցին վաճառականի խուլ և անդամալոյժ մօր ներկայութեամբ, երեխանների և կնոջ, որ խելագարւեց։

Ծերունին պատմեց, որ խեղճ կինը, բոլորովին կորցնելով իր բանականութիւնը, փախել է լեռները, և երկար ամիսներ ապրել է խոտուտելով։ Գիշերները նա երբեմն իջնում էր գիւղն ու թափառում իր տան աւերակների շուրջը, և այստեղ, մի քարի վրայ նստած, երկար ու աղեկէզ ճիշեր էր արձակում։ Նրա ամեն մի այցելութեան հետեւեալ օրը գտնում էին մի թիւքք պահակի դիակ՝ սոսկալիօրէն այլանդակւած։

Խելագարն իր վրէժն էր լուծում...

Մեր առաջնորդը ցոյց տւեց Մշոյ ամենահարուստ բնակիչներից մէկի տան մնացորդները։ Կոտորածների և տեղահանութեան ժամանակ, ոստիկանութիւնը մի օր եկաւ և հազար ոսկի պահանջեց նրանից։ Նա լրիւ վճարեց այդ գումարը։ Հետեւեալ օրը ժանդարմները դարձեալ եկան և տունը շրջապատելով՝ սկսեցին դուռը կոտրել։ Կացնի հարւածներով։ Տեսնելով իր անխուսափելի կորուստը՝ նա հաւաքից իր զաւակւած։

Ներին ու ընտանիքը և դիրք բռնեց տան մէջ։ Թիւքքերը չկարողացան ներս խուժել և կրակ տւին տունը։

Տեղի ունեցաւ սոսկալի մի տեսարան։ Հրդեհը, որ հասել էր երկրորդ յարկը, ուր ապաստանել էին պաշարւածները, սկսել էր խեղդել նրանց։ Կանայք սրտակէզ աղաղակ էին բարձրացրել և պատուհանից վայր նետւել՝ ընկնելով դահիճների սրբների վրայ։ Վերջում, պատուհաններից մէկի մէջ երևաց մի կին, թևերով գրկած երեխային, հագուստն արդէն կրակ առած, աչքերն ահարկու, սարսափելի մի ճիշով իր ատելութիւնը թափեց թիւքքերի վրայ և երեխայի հետ միասին վար գահավիժւեց։ Ամենքն էլ կռան կրակի մէջ։

Այդ տնից այլևս ոչինչ չէր մնացել, բացի պատերից, որոնք թէև դեռ կանգուն, բայց այնքան սպասնալից էին, որ չէինք համարձակւում ներս մտնել—մի հպում բաւական էր, որ նրանք տապալէին։ Աւերակների միջև միայն այրւած գանգեր էին երևում։

Եւ ամեն մի քայլափոխին՝ զուլումի սրտակեղք բեկերներն էին ընկած, գանդաղ և տեսական զուլումի, մինչև յետին քարը, մի խօլական զուլում, որ չէ արդարանում և ոչ մի անհրաժեշտութեամբ, այլ կատարւել է միայն մի ցանկութեամբ, որի նշանաբանն է «աւերել» աշանկութեամբ, որի նշանաբանն է «աւերել» ա-

ւեր գործելու համար», և որը թիւրք հոգու բնու-
րոշ գիծն է:

Զուր շրջեցինք փողոցներում՝ փորձելով
դասել մի տուն, որ խնայւած լինէր: Եւ ոչ մէկը,
և ոչ մէկը չէ խուսափած ջարդից:

Ծերունի հայը մեզ ցոյց տւեց ուրիշ շատ
աների աւերակներ, որոնց տէրերը կոտորւել էին:
Նա մատնանշեց մեզ մի թիւրք երեւլիի հարե-
մը, որ հայ կանանցով է լցւած եղել: Նա առաջ-
նորդեց մեզ դէպի հայոց գերեզմանատունը, ուր
շիրիմները պղծւած էին և ուր տասնեակներով
դիակներ էին տարածւած:

Վերջում տեսանք գերմանական կարմիր
Խաչի շէնքը, ուր ոչ մի էակ, ոչ մի գերմանա-
ցի քոյր չէր ըմբոստացել՝ իրենց աչքի առաջ
կատարւող կոտորածների դէմ. ոչ մի բողոք չէ
բարձրացել՝ կասեցնելու այդ զազրելի սպանու-
թիւնները, և մինչև իսկ ոչ նեղութիւն չէ
կրել հաւաքելու փողոցներում թափառող հայ
որբերին:

Ահա, թէ ինչ է գերմանական կուլտուրան:
Եւ սակայն, ներս մտնելով այդ շէնքից, ով
հեղնանք, ինչ ենք տեսնում սեղանի վրայ: Գու-
շակեցէք:—Գեօթէի մի երկն ու փիլիսոփայա-
կան մի գիրք՝ Կանտի բարոյագիտական մի
տրակատը:

ՅԱՌԱՇ

Հաղիւ մի քանի օր էր անցել մեր Մուշ
համելուց, երբ հրաման ստացւեց ճանապարհ
ընկնելու: Մեր խումբը պէտք է ուղղւէր աւելի
արևմուտք՝ նախ հետեւելով Եփրատի հոսանքին,
ապա պէտք է դառնար դէպի Դիարբէքիրի ուղ-
ղութիւնը:

Մեր զինւորները, որոնք դեռ հանգիստ
չէին առած՝ շատ ծանր պայմաններում կատար-
ւած նախկին առաջնադաշտիւններից, և ու-
ժասպառ՝ իրենց կրոծ զրկանքներից, առանց
նոյնիսկ ժամանակ ունենալու անհրաժեշտ հան-
գիստն առնելու, պէտք է դարձեալ ճամբայ
ընկնէին: Գժւարութիւնները հետզհետէ աւելա-
նում էին, իսկ կենսամթերքը բոլորովին սպառ-
ւած էր: Երկու օր էր արդէն, որ զինւորներն ոչինչ
չէին գրած իրենց բերանը, և արանսպորտը, որ
ալիւր պիտի բերէր, դեռ չէր երկում:

Ի լրումն գժբախտութեանց, առատ ձիւն էր
եկել գիշերը և ճանապարհները տեղ-աեղ անան-
ցանելի էին դարձել: Միայն մեր կամաւորները
կարող էին յաղթահարել այդ խոշնդոտները և

անտրտունջ տանել այդ զրկանքը։ Զլսւեց և ոչ
մի գանգատ, ոչ մի զայրոյթ, և ոչ իսկ մի
քրթմանքում։ Պէտք էր առաջ շարժւել—կը շարժ-
ւենք, պրծաւ գնաց։

Մեզ յանձնարարւած գործը կարեոր էր ու
դժւար։ Պէտք էր առաջանալ խոհեմութեամբ,
որովհետև թիւքքական յետնապահները հակա-
յարձակումներ գործելով էին նահանջում։

Մեկնեցանք, քաղցած ու յոգնած։ Թիկուն-
քից փշում էր ուժգին քամին, որ քանի առա-
ջանում էինք՝ սաստկանում էր, կարծես իր
սաստկութեամբ թելադրում էր մեզ քարշ գալ
դէպի առաջ, շտապել երկրից վանելու թիւր-
քերին։

Մեր առաջապահ ձիաւոր խումբը ճանա-
պարհ էր բաց անում կուելով թիւրք հրոսա-
խմբերի դէմ, որոնք մի պահ կասեցնում էին
մեր առաջխաղացութիւնը, բայց հենց որ հետե-
ւակ զօրքը համում էր, փախչում էին, և իս-
կոյն ամեն ինչ լուսում էր։

Եւ նրանք քայլում էին շարունակ, առաջա-
նալով ձիւնի միջից, ցուրտ եղանակին, նեղ ու
վտանգաւոր արահետներով, ուր ձախորդ մի
քայլը կարող էր անդունդը գահավիժել անցորդին։

Գնում էին կամաւորներն ազատութեան
ճանապարհով փրկելու իրենց եղբայրներին,
որոնք հեծում էին թիւքքական լծի տակ. գնում

էին ուրախ զւարթ, և ամենքի սիրտը այրւում
էր վրէժխնդրութեան բոցով բոլոր անարդար կեր-
պով կրած տառապահների համար։

Քանի առաջանում էինք, հանդիպում էինք
դիակների, երբեմն առանձին, երբեմն էլ կոյտե-
րով, դիզւած դիւղերի մէջ։

Սոսկալի տեսարան էր պարզուում մեր ան-
ցած ամբողջ շրջանում։ Դէս ու դէն աւերակ-
ների տձեւ կոյտերը, որոնց մէջ դեռ ևս ցցւած
էին մնում այրւած գերաններ, ցոյց էին տալիս,
որ այդ տեղերում առաջ գիւղեր են եղել։ Շըշ-
մած էինք մնում կոտորածների հետեանքն եղող
այդ աւերումների առջեւ։ Ահազին տարածու-
թեան վրայ այդպիսի մեռելային աւերակոյտեր
էին սփռւած այստեղ, որ Մշոյ դաշտն էր եր-
բեմն…

Ահա, թէ ինչ էին դարձրել երկիրը։ Աղէտ-
ների աշխարհում երբեմն կանգուն են եղել վար-
դերի բուրաստաններ, պտղաբեր ծառեր, բոյ-
սեր, աշխատանքով ու կեանքով եռուն ընակա-
րաններ։ Իսկ այժմ ուրգի քօղն էր պատել այն
վայրը, ուր մարդկային աշխատանքն երազել էր
շինել երջանիկ ու խաղաղ ապաստան։ Աւերիչ
հեղեղն էր պոռթկացել՝ ամայացնելով երկիրը,
ամեն ինչ սրբելով իր անցած ճամբի վրայ։ Ահա
դերագոյն հանգրւանն այն բանի, որին ումանք
ամսւանում են պըոզբես,—մոլեռանդութեան և

սուլթանի արիւնաներկ գահից ստացւած հրամանների հետևանքները...

Ճանապարհի վրայ ցանուցրիւ ընկած էին կենդանիների դիակներ՝ թունաւորելով մթնոլորտը, և տալիս էին այս դաշտին տեսքը մի երկրի, որ ամայացել է կարծես ժանտախտից։ Միայն շներն էին, որ պարարտացել էին մուելով այդ բայքայւող մսով։ Նրանցից նկատում էին երկուը կամ երեքը՝ կատաղած միևնույն դիակի վրայ, քաշքալիս ուղար մի մեծ սրունք, կամ ձիու կուրծքը պատառուելիս։

Մի ամբողջ օր ճանապարհին աքնելուց յետոյ, վերջապէս հասանք մի գիւղ, համարեած ձիւնի մէջ թաղւած, որի գեռ կանգուն մնացած մի փոքր, բոլորովին նախնական շինւածքով եկեղեցուց հասկացանք, որ այստեղ հայեր են եղել ապրելիս։ Գիւղը, որի անտևը չկարողացինք իմանալ, քանի որ ոչ մի քարտէզում նշանակւած չէր, և որից ոչ մի կենդանի էակ չէր մնացել, գանւում էր Սասունի լեռնաշղթայի ճիշտ ստորոտում, Մուշից մօտ 8—9 վերստի վրայ, կիզիւղաջի ճանապարհին, Ս. Յովհաննու վանքից միքիչ հարաւարեկը։

Մահւան այս սրտակէզ վայրում մի ցնցող տեսարան էր սպասում մեզ։ Այդ տեսարանն այնքան սոսկալի էր, որ մինչև անգամ մեր հինգնորսները, որոնք շատ են պատահել թիւրքա-

կան վայրագութիւններին, զարհուրեցին՝ տեսներով տներում խառնիխուռն կիտւած դիակները։ Թիւրքերը չէին բաւականացել սպանելով գիւղի բոլոր բնակիչներին և շրջակայ վայրերի հայերին ևս այստեղ էին բերել՝ ամենքին միասին կոտորելու համար։

Հայաստանում, քաղաքների թէ գիւղերի մէջ, թիւրքերի գործադրած ուժիմը միշտ միենոյնն է եղել — աւեր և սպանութիւն։ Բայց այդ սկզբունքը տարբեր կիրառումներ է ունեցել՝ նայած հանգամանքներին ու վայրերին։ Մեծ քաղաքներում հայերին սպանելու համար քշում էին գէրում հրշակաները, իսկ գիւղերում տեղնուտեղն էին կոտորում։

Մի քանի լնկերներ և ես մտանք ճամբի վրայ գտնեսող մի տուն, որ մի էր դիակներով ու կմախքներով։ Նրանք հարիւրներով էին ընկած։ Դիակների մի մասի քայքայման պրոցեսը բաւական առաջացել էր, ուրիշների վրայ ցեսը բաւական առաջացել էր, ուրիշների վրայ էր միայն մի քիչ սկացած կաշի՝ ոսկորմում էր միայն մի քիչ սկացած կաշի՝ ոսկորմում էր կապած ու չորացած։ Թւում էր, թէ խօներին կպած ու չորացած։ Թւում էր, թէ խօներին այդ փշաքաղող գանգերը, մի քանիսին արդէն մկները կըծել, այլանդակել էին, ուրիշների վրայ դեռ մազեր կային, մնացածների վրայ բեղերի մի խուրձ, մօրուքի մի տրցակ... վրայ բեղերի մի խուրձ, մօրուքի մի տրցակ... կին գանգեր, որոնք նայում էին իրենց խոսուային գանգեր, որոնք նայում էին իրենց խոսու-

բագօրէն ծիծաղում էին. կային այնպիսիներն էն որ ցաւից կուչ էին եկել, և ամենքն էլ խելայեղ՝ գերմարդկային սոսկումից:

Թոնիրի մօտ մի կողմն ընկած էին մօտ քսան մարդ, իրար վրայ թափւած: Կարելի էր կարծել, որ նրանք դողում են, ուզում են փախչել, «օգնութիւն» են աղաղակում: Թւում էր, թէ նրանք դեռ ևս ցնցւում են վերջին ըոպէի սոսկումից, երբ մահը վրայ հասաւ:

Զարհուրած այս տեսարանից՝ դուրս եկանք: Աջ ու ձախ անծայր երկարում էր բաց դոներով աների այդ վիթխարի ճեկատոմքը: Մի քանի քայլ դէնը, մի շատ փոքր տնակ նոյնպէս լի էր ամեն մեծութեան կմախքներով ու գանգերով. կային փոքրերը, մեծերը, միջակները: Կային ջախջախւած գանգեր, կմախքներ՝ երբեմն այնքան այլանդակւած, ճզմւած ու սարսուզգեցիկ, որ անկարելի էր զսպել արցունքը: Եւ մահւան բոլոր այս մնացորդները ցըիւ էին եկած դէս ու դէն, անկիւններում: Ամենաանսովոր դիրքերով տարածւած մարմիններ, ուղեղների բեկորներ, շաղախւած մազերի տրցակների հետ, շորեր, ամաններ, զգեստներ քարշ էին դախիս՝ կազմելով ցեխի, ոսկորի և կեղտի մի խառնուրդ:

Կային դեռատի աղջիկներ, դիւրաւ ճանաչելի իրենց մատղաշ կերպարանքից, յստակ գոյ-

ներով, պառկած մի կողմ, բռնաբարւած և ապա սպանւած: Ահա մի շատ երիտասարդ տղամարդ, անտարակոյս վաղուց մահացած, որովհետև սանդախներ են գոյացել չորացած ոտքերից: Դէմքն ամբողջովին ծածկւած է դաշոյնի հարւածներով:

Եւ մարդ սոսկում էր մտածելով, որ բոլոր այդ դիակներն ուպրում էին դեռ մի քանի ամիս առաջ, կենսալից և ուրախ... կային մանաւանդ փոքր դիակներ, իրենց պստիկ շորերով, որ հագել էին կեանքի վերջին օրերին: Յաճախ էինք տեսնում զրկախառնւած երկու դիակներ—մայրն ու երեխան, և այն ժամանակ կուահում էինք զարհուրելի տեսարանը, կամ երևակայում, թէ ինչ սոսկալի ոճիր է գործւած:

Թողեցինք այդ ահարկու պտոյտը՝ այցելելու համար եկեղեցին, առանց կասկածելու, որ այն տեղ աւելի արհաւրալից տեսարան էր սպասում մեզ: Եկեղեցի մատնելով, ամենից առաջ խորանի վրայ տեսանք մի տամնեակ կտրւած և կարգով շարւած գլուխներ. դրւած էր մէջտեղը և միւսներից զանազանում էր քահանայի գլուխը: Եր եկեղեցական զգակով: Նրանց սոսկալիօրէն տարօրինակ դիրքը գամում էր ձեզ կանգնած տեղի: Այդ բոպէնների ընթացքում չէինք կարող երևակայել դժնդակ իրականութիւնը: Անհաւատալի էր թւում, որ կարելի է հնարել հակամարդկային,

սոսկալից էլ գէնը, այդպիսի բաներ.—դա մի ֆանտասիկ տեսիլ էր, որ շատ էր գերազանցում Վերեշշագինի երևակայական նկարագրութիւնները:

Գետինը ծածկւած էր գիտների անհամար բաղմութեամբ, և այդ խառնիճաղանձից բարձրանում էր մի խիստ սուր, ծանը գարշահոտութիւն: Վատ էիք զգում ձեզ, սարսափի տեսարանը, միացած հոտին, կրծում էր ձեզ, արիւնը զլիիդ խփում, և ոլեաք էր դուրս գալ, վաղել, հեռու փախչել այդ ֆանտասիկ տեսիլից, որ ձեզ հետեւում էր մինչև ուշ գիշեր...

Սոսկումի այդ տեսարանները, առհասարակ, միայն ցասումի զգացում չէին արթնացնում, այլ և մեծապէս ազդում էին մեր ընկերների հոգեկան դրութեան վրայ, դրանք իրենց հետեւանքն ունէին ջղային սիստեմի վրայ: Երբ շատ երկար էիք դիտում խեղւած գիտները, ջղային ծիծաղ էր բոնում ձեզ, մարմնիդ բոլոր անդամները սկսում էին սարսուալ: Ախտաբանական այդ երևոյթները հետաքրքրական էին հոգեբանական-բնախօսական տեսակէտով:

Վայ, թէ դրանից անմիջապէս յետոյ մի կոփւ մղւէր. այդ ժամանակ մեր ընկերներն անգութ էին դառնում: Տեսած անգթութիւնները նրանց արգելում էին ներողամիտ լինել գեպի իրենց եղբայրների գահինները. և այնքան ծարաւի էին

դառնում վրէժինդրութեան, որ գժւարութեամբ էին հասկանում, թէ այնպիսի մի արշաւանք, ինչպիսին է իրենցը, պատըատւում է երկարութիւն, մեթոդիկ կերպով:

Էինելով գաւակներն այնպիսի մի երկրի, ուր արեան պարտքը չհատուցանող մարդն անպատւում է, նրանցից իւրաքանչիւրն ուղում էր առաջ անցնել, սպանել այնքան թշնամի, ինչքան գնդակ կայ իր փամփշտակալում, և մնացած գնդակ կայ յարձակւել դանակով, ատամցածներով ու եղունգներով...



ՂԸԶԸԼԱՂԱՇ*)

Դաշտում գիմադրելու անկարող թիւրքերը քաշւեցին զէսլի լեռները։ Օգնական ոյժեր չըստանալով՝ մենք չենք կարող հետապնդման ձեռնարկել, որովհետև եթէ թշնամին պարտում էր հարթ տեղում, նա, ընդհակառակը, յամառ դիմադրութիւն էր ցոյց տալիս լեռներում, ուր նրա կուելու եղանակը հրաշալիօրէն յարմարում էր տեղական պայմաններին։

Յաճախ էր պատահում, որ սարերի վրայ քարերի յետևում ապաստանած քրդական մի հրոսախումբ ամբողջ օրերով կասեցնում էր բազմաթիւ վաշտերի առաջնադաշութիւնը։ Թիւրքերը լինելով հիանալի հրացանաձիգներ և ունենալով ահագին քանակութեամբ զէնք ու փամփուշտ՝ իրենց ասպատակութիւններով՝ անհրաժեշտ ու օգտակար մի տարր էին հանդիսանում թիւրքական կանոնաւոր բանակի համար և այլազան գերեր էին կատարում։

Թիւրքերի և մեր միջն մղւած կոիւը

*) Մի գիւղ, Մուշից քսան վերստ հեռու, Դիարբերեի ուղաւթեան վրայ։

սկզբից ի վեր սոսկալի և անխնայ էր։ Նրանց գիւղերում կային պահւած պաշարներ, թաղւած ուզմամթերք ու զէնքեր՝ թէ իրենց պէտքերի և թէ թիւրքերի սպառազինման համար։ Ամեն անգամ, որ այս վերջինները ստիպւում էին նահանջել մեր յարձակման առաջ, քիւրդերն անմիջապէս դառնում էին խաղաղասէր, անզէն, հանդարտ մի ժողովուրդ և ոռւս կառավարութեան նկատմամբ իրենց օրինապահութիւնն էին յայտնում և նոյնիսկ յաւակնում էին մեր բարեկամութեան։ Իսկ երբ մենք դժբախտութիւն էինք ունենում նահանջելու, հարցը բոլորովին այլ կերպարանք էր ստանում։ Զէնքերն անմիջապէս դուրս էին հանւում թաքստոցից և քիւրդերը վերստին ուզմիկներ էին դառնում և սկսում իրենց նենգամիտ գործը. յանկարծ յարձակւելով մեր յետնապահ զօրքի վրայ, հրացանազարկ էին անում մոլորւած ուշացածներին, խմբից անջատւածներին, սպանում էին քայլելու անկարող վիրաւորներին, լրտեսում էին, սխալ ճանապարհներ էին ցոյց տալիս մերոնց, իսկ թիւրքերին՝ ամենակարճ ուղիները։ Երկդիմի կախաղը նրանց սիրած գործն էր։ Բայց մեր կամաւորները՝ քաջ ծանօթ լինելով քիւրդերի սովորոյթներին ու բարքերին, չվստահելով նրանց ստախօսութիւններին, թակարդը չէին ընկնում։ Ափսոս, որ ոռւս զինւորները տուժում էին

դրանից, որով ետև հրամայւած էր չգիպչել այդ «միրնի յիւթել» հերին, որոնք երբեմն իսկապէս արտասովոր կերպով չարաշար էին վարւում այդ դէպքում:

Նախքան աւելի առաջանալու վտանգին ենթարկելը, մեր բանակատեղին հաստատեցինք Հըզըլաղաճ գիւղում, ուր, թւում էր, բնութիւնն ոչինչ չէր ինայել երկրային դրախտի վերածելու այդ գիւղը: Նա գտնում էր մի բարձունքի վրայ, դիմացը մի բլուր էր բարձրանում մի քանի տներով, որտեղից աչքի էր ընկնում Ս. Յովհաննու վանքը: Չիւնահալքից գոյացած մի սրբնթաց հեղեղ լեռնից իջնելով՝ հոսում էր մի քիչ հեռու Եփրատի մէջ թափւելու համար: Սասունի լեռնաշղթան, յաւիտենապէս, ամառ թէ ձմեռ, իր ձիւնապատ սարերով հովանաւորում էր գիւղի հարաւային կողմը՝ կազմելով մի բնական պաշտպանութիւն: Հիւսիսից Մշոյ դաշտն էր տարածւում իր բազմաթիւ գիւղերով, որոնց մէջտեղից կարում, անցնում էր Եփրատը—բազմահազար հայերի գերեզմանը:

Հըզըլաղաճում պատերազմից առաջ միայն հայերն էին բնակւում, թւով 2,000 և զբաղւում էին ծխախոտի մշակումով ու խաշնարածութեամբ: Հարուստ, օժտւած իր արգասարեր հողով ու եղակի գիրքով, որովհետև գտնում էր Մուշ—Տիգրանակերտ ճանապարհի վրայ, այդ

գիւղը բարգաւաճում էր, երբ յանկարծ համաշխարհային պատերազմը բռնկւեց՝ հրի և արիւնի մատնելով երկիրը:

1915-ի յուլիս ամսում քիւրդ Ռասուլ Բէկը հաւաքել էր գիւղից 800 հոգի և, ճամբաներ շինել տալու պատրւակով, իր մարզկանց ու ժանդարմիների միջոցով նրանց քշել էր տւել այդտեղից ոչ հեռու մի կիրճ, Խուլիի ուղղութեամբ, և նրանց ձեռքերը կապել տալով հրամայել էր կոտորել: Հրացանազարկ են արել տասնեակներով, և որովհետև այդ «գեաւուլների համար չարժէր փամփուշտ վատնել»՝ անցել են գաշոյնի գործածութեան: Եւ, ինչպէս միշտ, քիւրդերն անձնատուր են եղել վայրագութեան ֆանտազիային—կրծքերի վրայ դաշոյնով խաչ են գծագրել, ուրիշների մատներն են կտրել՝ սոսկալի տանջանքներ հնարելով այդ թշւառ հայերի համար:

Գիւղի կանանցից նրանք, որ ոչ գեռատի էին և ոչ էլ գեղեցիկ՝ ողջ ողջ այրւեցին մի տան մէջ: Ամենաերիասաւրդ ու ամենագեղեցիկ կանայքը՝ այդ չարաբաստիկ առաւելութիւններն ունեցողները—ենթարկեցին թիւրք խուժանի խժգութիւններին, և մեր մօտենալուն պէս տարւեցին նրանք ուազմաճակատի թիւրունքը: Հարիւրաւոր բնակիչներ կոտորւեցին Եփրատի ափերին և յետոյ թափւեցին գետի մէջ: Քանի

մուռմ էինք այդտեղ, ամեն օր տեսնում էինք Եփսատի մէջ դիակներ, որոնք քշում էին հոսանքից:

Հրաշքով մոռացւածներն աքսորի սոսկալի հեռանկարով էին ապրել: Այդ գիւղի, Մուշ քաղաքի և գաւառի այն բոլոր բնակիչները, որոնք չսպանեցին և ժամանակ չունեցան փախչելու գէպի ոռւսական, զօրագծերը կամ դէպի լեռները՝ տեղահանուեցին: Այլին Միջագետք տանելու ամառ կազմւ հանան կարաւա նընոչ այլ ինչ էին, եթէ ու ուսուալից մահւան դատապարտութիւն, և տեղնուալու սպանումը նըրանց ազատած կը լինէր շատ տառապանքներից:

Ճանապարհին, այդ ճանապարհին՝ ձիւնու և ապա՝ քանի նրանք կտրում էին տարածութիւնը, հասարակային շողի այդ ճանապարհին, մեռնում էին քաղցից ու յոդնութիւնից, շարունակ կողոպտում և խոշտանգուում էին քիւրդերից: Կանայք զնում էին հարեմները լցնելու համար, երեխաներին մահմեդական էին դարձնում, և նրանք, որ վերջի վերջոյ խուսափում էին այդ բոլոր արհաւերքներից, Արջագետք համնելով թողնուում էին իրենց ու բախտին՝ այդ անպատճան ու անսմռւնդ անապատում:

* * *

Արդէն կատարեալ ձմեռ էր և սառնամանիք ամենուրեք: Զիւնը, որ իր սպիտակ սաւանով ծածկել էր ամբողջ երկիրը, առաջին ակնարկից թւում էր, որ ընկղմւել է դժնդակ տրտմութեան մէջ: Արագիների մի երամ, տերևաթափ ծառերի վրայ թառած, հեռու մարդկանցից, որոնք քաշւած էին, ճշում էին՝ օդը լցնելով իրենց սուր ձայներով, որոնց պատասխանում էին միայն գաղաններն ու շների չարագուշակ հաջոցները:

Մենք պէտք է սպասէինք Բաղէշի շրջականերում կատարող անցուդարձերի արդիւնքին: Ուզմազիտական այդ շարժումը, որ կատարում էր գիւղիկացի հրամանատար գեներալ Նան տեսնդու էր դարձնում մեր սպասումը: Մեր ճակատում շատ բան կախում ունէր ուազմագիտական մանեօվրից—խմբաւորումը, մասսաների փոխադրութիւնը, մի որևէ տեղում ոյժերի միացումը, կենտրոնի տեղափոխումն իր թևերի վրայ, ծաւալումը, շրջագիծ կազմելը, ճեղքելը յաճախ վճռում էին յաղթանակը:

Մինչ ուրիշ ուսզմաքեմերում հրետանին, 42 սանտիրմենտանոց թնդանօթները, աէրօպլանները, սպառազէն աւտոմոբիլները, ընդերկը եայ պատերազմն էին գործ տեսնում, այստեղ իսկական պատերազմ էր մզւում, ուր զինուրի ան-

հատական քաջութիւնը կարող էր արտայայտւել իր ազատ թափով, ուր հեծելազօրքին չէր փոխարինում և չէր կարող փոխարինել օգագնացութիւնը, ուր մեր կամաւորների մի խիզախ հետախուզութիւնն աւելի գործ էր տեսնում և արդիւնաւոր էր, քան անզիւական զբահապատ աւտոմոբիլիները:

Այդ վայրի և շրջակաների տեղագրութեանը մի քիչ ժամովանալուց յետոյ, մեր պետերն ամեն նախազգուշութիւն ձեռք առան՝ թշնամույանկարծական յարձակման չենթարկելու համար, և ամեն մի անակնկալի առաջն առնելու նպատակով ամեն օր հետախուզութիւններ էինք կատարում լեռներում։ Այդ հետախուզութիւնների ժամանակ, երբ ընդհարւում էինք թիւրքական առաջապահների հետ, մեր զինուորները մեծ փորձառութիւն էին ցոյց տալիս և բոլորովին առանձնակի գերազանցութիւն էին երկան հանում։ Զիար նըանցից աւելի հնարամիտ, աւելիյախուռն, աւելի ճարպիկ՝ պահակին ողջ-ողջ բըռնելու կամ գերիներ վերցնելու գործում։ Նըանք այդ անում էին արտասովոր պարզութեամբ, մահւան հետ խաղալով։ Յաճախ նըանք աներկիւղ յարձակւում էին թշնամու վրայ, խուճապ ձգում թիւրքական շարքերում, և օգտակալով այդ անկարգութիւնից՝ ջարգում էին թուով տամնապատիկ թշնամուն։

Օր չէր անցնում, որ հրացանաձգութիւն կամ ընդհարումներ տեղի չունենային թիւրքական ոյժերի հետ, թայց տասն օր էր, որ սովորելի ու աւելի էր սաստկանում և վերջ ի վերջոյ աւերածութիւններ էր գործում։ Զիերն ընկնում էին վարսակի չգոյութեան պատճառով։ Մեր ժամանումի առաջին օրերին կարողացանք մի կերպ կերակրել նրանց՝ շնորհիւ գիւղերում թիւրքերի թողած առատ պաշարի, բայց արդէն ամեն ինչ սպառւել էր և ոչինչ չէր մնում այլևս։ Միւս կողմից զինուորներն իսկապէս հրաշքներ էին գործում՝ մթերքների չգոյութեան գէմ կռւելու համար։ Վերջին մնացորդները սպառւել էին, և երկու օր էր, որ ապրում էինք մի քանի կտոր հացով և ջրով։ Մօտենում էր սոսկալի, սպառնալից քաղցը։ Ո՞ւր գնալ, ո՞ր գուռը ծեծել—ամենուրեք միենոյն դրութիւնն էր։ Սպառւել էր շաքարի շատ փոքր պաշարը և վերջ ի վերջոյ պէտք էր զրկւէինք և թէյից։

Ամեն մէկը գնաց վնարտուքից Խուրջինները խուզարկւեցին, տասն անգամ դատարկւեցին, բայց ոչ մի կտոր հացի մնացորդ չկար, և ձեռնունայն մնացինք։ Մեր կամաւորներից մի մասը կրիայ և գորտ էր ուտում՝ շամփուրի վրայ խորոված։ Մեծ զրկանքների այդ ըոպէներին, երբ սովոր շատ սուր կերպարանք էր ստացել, նըանք, որ շատ էին թուրքացած վնում և

չեն կարողանում պահակ կանգնել, գնում էին պառկելու և երկար ժամերով քնում էին: Երբ զարթնում էին և ծիծաղ չէին նկատում ընկերների շրթունքների վրայ, նորից ընկնում էին՝ քունը շարունակելու: Յաճախ նբանցից մէկն ու մէկը զարթներով պատմում էր իր տեսած հրաշալի երազը — ռսպիտակ հաց, վրան էլ մի կտոր պահիր»:

Եւ այսպէս, սովոր էր իշխում մեր բանակում, ամեն մարդ տառապում էր նրանից: Ուուս վաշտերում սպաներն առանձնաշնորհւած էին և քիչ անգամ էին ստիպւած լինում կրել զինուորների զրկանքները: Մեզանում, ընդհակառակը, խմբապետ թէ զինուոր, հաւասարապէս էին բաժանում նեղութիւնը. ուստի և մեր խումբը սերտ միացած մի ընտանիք էր կազմում:

Դա մի հոգեբանական գործօն է, որ հսկայական կարևորութիւն ունի այնպիսի պատերազմում, ինչպիսին է մեր ուազմաճակատի վրայ: Կուի ժամանակ մեր պետերի և զինուորների միջև յարաբերութիւնները յուզիչ ընտանեկան գրոշմ էին կրում: Միասին էին տառապում, մինոյն արիութեամբ տանում զրկանքները. բայց երբ հարցը գալիս էր թշնամուն դիմազրաւելուն, պետն իր զերի մէջ էր մտնում, և մեր զինուորները գիտէին հնագանդել:

Մեր ընկեր Տիգրանը, որ մեզ համար վեր-

ջին աղբիւրն էր, և որի վրայ էինք դրել մեր բոլոր յոյսերը, առաւօտ կանուխ գնացել էր և դեռ չէր վերադարձել: Մեկնելիս նա «Երդւել էր» ուտելու մի բան բերել մեզ: Ամբողջ օրն անցրինք՝ նրան սպասելով: Նա երկու կամաւորի հետ գնացել էր մի հարևան գիւղ, որից քաշւել էին թիւրքերը և շատ էինք անհանգստանում, որ չեն վերադառնում:

Վերջալոյսի վերջին ցոլքերն անհետանում էին լեռների յետև ու գիշերն արդէն իր մթնշողն էր ձգել մեր զիւղի վրայ, երբ յանկարծ զիւղի ծայրում նկատւեց Տիգրանի վիթխարի ուրւագիծը՝ յաղթական ընկերակցութեամբ զինուորների մի խմբի, որ նրան ընդառաջ էր գնացել:

Ֆանտաստիկ ծրագիրներ էինք կազմում: Նա ի՞նչ կարող էր բերած լինել — անշուշտ՝ հաց, թերես մի ոչխար, և առաջուց մեզ հրամցնում էինք մի լաւ ճաշի հեռանկարը: Բայց երբ նա եկաւ ու գետնի վրայ դրեց մի տեսակ բայս մեր հրձւանքը շուտով փոխւեց դէմքի ծամածութիւնների, և մեր բոլոր ծրագիրներն ողբարէն տապալւեցին:

Ալսերև էր, որ կասկածում էինք այդ բոյսի մասին, որ մեզ թւում էր ոչ-այնքան սննդարար: Նկատելով մեր յուսահատ տեսքը՝ Տիգրանը գործի անցաւ, շարունակ կըկնելով —

«կը տեսնէք, թէ ինչքան լաւն է, այսպիսի լաւքան կեանքներումդ չէք կերած»։

Տիգրանը ջուր լցրեց մի կաթսայի մէջ և խոհարապետի յատուկ վարպետութեամբ մէջն ածեց բոյսը։ Շըջապատեցինք խարոյկը և հիացմունքով լի երջանկութեամբ դիտում էինք ջրի եռալը։ Կրակի շուրջը նստած՝ մենք ախորժանքով անհանգստանում էինք այդ բոյսի մասին, որ եռ էր գալիս, մինչ Տիգրանը լուրջ և հպարտ գէմքով՝ փայտով խառնում էր այնքան սպասւած կերակուրը։

Այգպիսի ռազմական կեանքում, երբ ոչ ոք վստահ չէր վաղւայ մասին, մենք անվրդով էինք սովի այդ ըովէներին՝ երեխաների կամ՝ վայրենիների նման, որոնք միայն մի ցանկութիւն ունին, միակ բնազդ—ուտել։



ՀԵՏԱԽՈՒԶՈՒԹԻՒՆ

Հրաման էր եկել հետախուզութեան գնալու՝ քննելու համար թշնամու գիրքերն ու այդ վայրի տեղագրութեանը ծանօթանալու։ Նոյն պէս պէտք էր գտնել Զեշմէ-Գեատուկի գագաթն առաջնորդող մի կարձ ճամբայ, որ տեղից մի օր յարձակման պէտք է զիմէինք թիւրքերի վրայ և ապա առաջանայինք Տիգրանակերտ։

Այդ գժւարին ձեռնարկի համար—հետախոյզները 16 կիլոմետր պիտի անցնէին այդ լեռնոտ գաւառում—50 զինւոր նշանակւեցին։

Ընտրւած կամաւորներն ամենքն էլ հաւաքւեցին զիւղի մէջտեղը կուի հանդերձանքով, պայուսակներն ուսին, մեկնելու պատրաստ, երբ խմբապետը, որ նրանց պիտի առաջնորդէր, երկաց ուկուէրը մէջքին, արթուն ու եռանդուն։ Նա ոչ բարձրածայն գոռաց, ոչ զինւորներն իրենց կրունկները միացրին, ոչ էլ սոսկումով ուզգւեցին նրա մօտենալու։ Միայն խմբապետից գէպի զինւորն ու զինւորից գէպի խմբապետը մի նայւածք անցաւ, որ աւելի արժէր, քան հրամաններն ու ոչխարային հսազան։

դութիւնները։ Այդ նայւածքում մի ամբողջ պատմութիւն կար, անցեալի յուշերով և միենոյն քաջութեամբ մղւած կումներով ամբապնդւած ու շաղախւած մի ամբողջ բարեկաւմութիւն։ Այդ նայւածքում կար փոխաղարձ վստահութիւն և այն գիտակցութիւնը, թէ հարիւր անգամ միասին են դիմագրաւել մահւան։

— Քառեակ կազմել, յառաջ, ասաց խմբապետը։

Հրամանը պարզ էր, անշունդ, մեղմիւարւած մի նշան։

Եւ սակայն դա այն նշանն է, որ զինւորներին պիտի մղէ դէպի կոփւը, դէպի անծանօթը՝ լի ամենամեծ վտանգներով։ Նրանք պիտի դիմագրաւեին թշնամուն այդ կորստաբեր բնկագաւառում, ուր կետնքը վտանգւում է ամեն բողէ, ուր ճակատագիրը կախւած է մի գնդակից։ Եւ գիտակցելով այդ՝ նրանք ճամբայ ընկան։

Նախ մի հարթ ճանապարհով, ապա մի արահետով մագլցելով, այժմ երկու առ երկու, յետոյ մի առ մի, խումբն երկարում էր լոիկ։ Գիւղն անհետացաւ աչքից և շրջապատը համակւեց մթին տխրութեամբ։ Զիւնը ծածկել է ամեն ինչ։ Ահա մի ամայի գիւղ, որ զետեղւած է մի բլրի ստորոտում, որի վրայ ենք բարձրանում։ Զեւնային մի դաշտանկար է՝ թախծոտ գորշութեան մէջ։

— Կացէք։

Ամենքը կանգ առան։ Խմբապետն առաջանում է և հետազօտում հորիզոնը՝ նախքան լերան խուլ կիրճը մտնելը։ Պէտք է նախազգուշութիւններ ձեռք առնել, որովհետեւ շուտով անցնելու ենք մի բաց տեղից, ուր թշնամին կարող է նկատել մեզ իր գիրքերի բարձունքից։ Մեր խաջի համազգեստը տեսանելի մի բիծ է կազմում ձիւնի վրայ, նոյնիսկ հեռւից, և որպէսզի նա աննշմարելի դառնայ, պէտք է սպասել, որ լոյսի վերջին շողերն անհետանան։

Կանգ ենք առնում և սպասում։ Վերջալոյն իր աղօտ ստերն է ձգել։ Պիշերն ընկնում է, ճնշում կոպերը և մթագնում սիրտը։ Նորից ճամբայ ենք ընկնում և առաջանում, խոռված հոգով, դէպի վտանգներով մի վայր։ Հասնելով մի բարձր գագաթ, ձիւնը յանկարծակիի է բերում մեզ։ Ստիպւած ենք չորեքթաթ մագլցել, սահելով, իրար բռնելով, որպէսզի չընկնենք անդունդը, որին նենգամիտ կերպով քօղարկում է ձիւնը, և որ, զգում ենք, թէ շատ ծօտ է, պատրաստ մեզ կլանելու իր խորունկ խոռոչում։ Զիւնի փաթիւներն այնքան խտանում են, որ արգելում են տեսնել երկու քայլ դէնը։ Մերթ կանգ ենք առնում՝ ժամանակ տալու համար, որ ամենքը միանան, խմբւեն, և դարձեալ առաջանում ենք։

Հիմա էլ սարսափելի բուքն է վրայ հասնում, ոռնալով, և ձիւնն երեմներիս է խփում: Կըկին պէտք է կանգել և մնում ենք իրար կծկւած, դողլողալով, ցրտից սառած: Ցուրտը հետզիետէ յաղթում է մեզ, լեռների այդ թափանցող ցուրտը, որ սառեցնում է արիւնն ու ջլատում մարմնի անդամները: Բայց պէտք է մեկնել, չնայած որ փոթորիկը շարունակում է, որովհետև ժամանակը շտապել է պահանջում: Հաշում ենք, իրար ենք կանչում տեսնելու, թէ արդեօք մեզանից մարդ պակաս չէ:

Վերսկառւմ ենք անվերջ ճանապարհ: Սուաւուեան առաջին ճառագայթներն են երեսում և կազմւում է լոյսի մի նուրբ ցանց: Հիմա պէտք է բաժանել, անջատւել փոքր խմբերի, և մի առ մի մազլցել: Յանկարծ մի պատառուած դիակ ենք տեսնում, և աննկատելի սարսուռ է անցնում մէկից դէպի միւսը: Սառելուց դէմքը սեացած, մերկամարմին, զարհուրելի տեսք ունի նա: Գիշատիչ թռչուններն իրենց ճիշերով օդն են բարձրացնում այդ մարդկային ցնցոտիի մացորդները:

Երկար առաջխաղցութիւններում և մեծ ուղևորութիւններում առաջին լքումը միշտ գալիս է առաւուեան մթնշաղին: Ամենագժար անցկացնելի բոպէն է այդ, որովհետև պէտք է կուել ընկճող անքնութեան դէմ: Մեր փոքր

խումբը ցրիւ է եկած, շուտով ինձնից աւելի առաջացած ընկերներից անջատւած մնացի, և նրանց ու իմ միջև տարածութիւնը մեծամասլով ես կարծ ժամանակամիջում աշքից կորցրի նրանց ճանապարհի շրջակէտում: Մենակ մնացի: Ուժասպառ լինելով գժւարութեամբ էի առաջանում: Առաջին անգամն էի զգում, որ յոգնութեան չարախինդ տիրապետութեանն էի ենթարկում: Պլուսս ծանրացել էր, և կարծում էի, թէ ամեն ինչ դառնում է իմ շուրջը: Թեևը թմբել էին ու ծանրացել ցրտից ու ցեխից ձեռքերս այլ ևս կորցրել էին շօշափելու կարողութիւնը: Ծունկերս ծալւեցին, սրունքներս լքեցին ինձ և ընկայ՝ քաղցից, յոգնութիւնից ու ցրտից առաջացած թմբութեան մէջ:

Այսպէս յոգնած էի, որ թւում էր, թէ այլ ևս չէի կարողանալու ոտքի կանգնել, թէ պէտք է այդտեղ էլ մնայի: Այդ ժամանակ միայն յիշեցի, որ երկու օրից ի վեր ոչինչ չէի կերել: Ի զուր էի գրպաններումս որոնում հացի մոռացւած մի քանի փշրանք: Ոչինչ չգտայ: Յանկանում էի մահը, ուզում էի նիրհել, անշարժ մնալ, որպէսզի ոչինչ չզգամ այնուհետեւ, չտառապեմ:

Բայց մահը, որ թւում էր, թէ դարանամուտ սաւառնում էր այսակեզ, մերժում էր ինձ որպալ: Նա սիրահար էր երկար հոգեվարըի: Եւ

մինչ անհամբեր սպասում էի այդ ըռապէին, յանկարծ հրացանի ձայներ թնդացին պատռելով օդի լոռւթիւնը. թաք-թաք, թաք-թաք:

Յնցւելով ջղային ոյժով, մի ակնթարթում, զարմանալի կամքի ոյժ վերստանալով, ինձ աջողւեց ոտքի ելնել: Այստեղ մնայի արդեօք: Կարող էի թոյլ տալ, որ մեռնեմ թուլամորթ կերպով, երբ ընկերներս կուռում էին: Մի վայրկեանում վերստացայ իմ ամբողջ նորմալ դատողութիւնը. մի վայրկեան աչքիս առաջ երևաց, որ մեր զինուորները վտանգի մէջ են, պաշարւած: Ակսեցի վազ տալ. այն, վազում էի ես, որ ոյժ չունէի մարմիսս քարշ տալու, վազում էի խելազարի պէս, աչքս յառած դէպի առաջ՝ այնտեղ, ուր մերոնք էին:

Կատաղի, վայրենացած, շնչահեղձ մի վազք էր դա, ցատկում էի հեղեղատների վրայից, թըռչում վայրէջքներից, մազլցում բարձունքների վրայ, շարունակ նոր արգելքների միջով:

Երեք անգամ զլորւեցի՝ խոչքնդուների բաղիւելով, և ընկնելուց՝ ոտքի էի կանգնում, առանց զգալու այրող ցաւը, նորից էի սկսում վազել, կարծես խթանւած, արինելու աստիճան՝ մտրակւած լինէի: Այլև չէի զգում ոչ քաղց, ոչ ծարաւ, ոչ յոգնութիւն. չէի մտածում վտանգի մասին, վազում էի: Եւ թաք-թաք, թաք-թաքը շարունակ լսում էր:

Ինքը էլ չգիտէի, թէ ի՞նչքան ժամանակ էի վազել: Ամենուրեք ձիւն է, միայն և միայն ձիւն: Յանկարծ նկատեցի մի խոշոր քար առաջս, վազեցի և կծկւեցի նրա ետև: Զգոյշ ոտքի ելայ և ակնարկ ձգնցի չորս կողմս և յետ դաւնալով մարդիկ տեսայ: Հրացանն ուսս բարձրացրի, արձակելու վրայ էի, երբ ճանաչեցի մեր զինուորներին:

Սիմոնն ու Արամն էին: Ելայ և քայլեցի դէպի նրանց կողմը՝ երջանիկ զգալով ինձ, որ նրանց պատահեցի, երբ մի գնդակ սուլեց ականջիս: Ես նկատւել էի թշնամուց: Անմիջապէս գետնին պառկեցի. փամփուշտներն անցան իմ զլիի վերեկից:

— Շատապի՞ր, կանչեց Սիմոնը, անիծած թիւրքերը կը խփեն քեզ:

Սէծ ճիգերով, սողալով, ինձ աջողւեց նրանց միանալ: Կաը ճատե հրացանաձգութիւնից յետոյ վճռեցինք թշնամու թիւկունքն անցնել, կողքից հարւածել նրան և կտրել նրա նահանջի ճանապարհը:

— Շատ չպէտք է լինեն նրանք, ասաց Արամը, բերնիցը հանելով չիրուխը, որ երբէք բերնից վար չէր թողնում: Անկանոն են կրակում. եթէ բազմութիւ լինէին, համազարկ կը տային: Ուղղենք դէպի ձախ, այլապէս կարող ենք լինքներս շրջապատել: Եջ կողմից վախե-

նալու ոչինչ չունինք. մերոնք են այստեղ և չեն
թողնի, որ մարդ անցնի:

Սկսեցինք գգուշութեամբ սողոսկել իրար
ետեից, թողնելով, որ թշնամին կրակէ այստեղ,
որտեղից մենք քաշեցինք: Մէկ էլ մեզնից յի-
սուն քայլի վրայ նշմարեցինք թիւրքերի մի
խումբ: Նրանք տափարակ և բաց տեղումն էին
գտնուում, ձիւնի վրայ պտոկած և կրակում էին
մեր հանդիպակաց կողմը:

Կանգ առանք և բնազդաբար իրար նայե-
ցինք: Այնտեղ կային մօտ տասը հոգի թիւրքեր
ու քիւրդեր, և տարածութիւնն այնքան ըիչ էր,
որ նրանց ձայներն իսկ լսելի էին: Մի երիտա-
սարդ սպայ, որի ժապաւէնները ճառագայթում
էին, ծունկի էր եկել՝ զննելով շրջապատը. մերթ
ընդ մերթ նա ոտքի էր կանգնում իր մարդ-
կանց հրաման արձակելու համար:

Ի՞նչ պէտք է անէինք—խոյանալ նրանց
վրայ և յարձակում գործել: Բայց մենք երեք
հոգի էինք տասի դէմ և դա անօգուտ ոիսկ կը
լինէր: Թէ՛ նախ կրակ բանալ և սպասել, որ
նրանք գրոհ տան: Անորոշութեամն այդ մի քանի
վայրկեանները, որ անցրինք, ինձ ժամեր թւա-
ցին: Պէտք էր գործել արագ, վճիռ կայացնել՝
նախքան թշնամին կը նկատէր մեզ:

Սիմոնը հասկացաւ վաճանգն ու մեզ նշան
արաւ, որ չշարժւենք:—Մենք նախ կը կրակենք

և կը փորձենք խփել նրանցից մի քանիսին,
շնչաց նա:

Այդ բառերն արտասանւելուն պէս՝ կրակ
բացինք հրացաններից: Մեր առաջին համազար-
կին երեք թիւրքեր տապալւեցին՝ տեղնուտեղը
շանթահարւելով: Ճիշտ կրծքին էինք նշան առ-
նում՝ վստահ լինելով, որ հարւածը մահացու
կը լինի: Թշնոմին խելակորոյս էր եղել: Մեր
անակնկալ յարձակման յանկարծականութիւնը
նրան շշմեցրել էր: Եարսափի մի իրարանցում
ընկաւ նրանց մէջ. չգիտեին ուր գնալ. և սպան,
որ ուզում էր վերականգնել դիսցիպլինը, մնում
էր անզօր: Զայրանում էր, խփում էր զիւլոր-
ներին, հրամայելով մնալ իրենց տեղում: Բայց
ամեն ինչ ի զուր էր: Գլուխները կատարելապէս
կորցրած երկու ասկեարներն ուզեցին փախչել,
բայց շատ հեռու գնալու ժամանակ չունեցան,
որովհետեւ մեր երկրորդ համազարկն ուղարկեց
նրանց վրայ, և մահացու կերպով վիրաւորւած
ընկան ձիւնի վրայ:

Թշնամուն միջոց չտվինք ուշաբերւելու՝ հար-
ւած հարւածի ետեից տալով այդ խմբի վրայ: Մեր
ամեն մի գնդակը հասնում էր ճիշտ նպա-
տակին՝ հնձելով որիէ մէկին:

Այժմ միայն երկու ներկայացուցիչներ էին
մնացել թիւրքական վայրենի բանակից և մի
տխուր նմոյշ քիւրդական զկուլտուրայից. միւ-

ներն ամենքն էլ տապալւած էին արեան ճապա-
ղիքի մէջ:

Բայց վերապրողները մեզ նկատելով և գու-
շակելով մեր թիւը՝ դիմադրեցին: Այժմ գնդակ-
ները բզզում էին մեր ականջներին: Յանկարծ
լսւեց մի ոռւրց, յետոյ մի չոր աղմուկ, կար-
ծես մի բան կոտրւեց: Մեզնից մէկին մի
գնդակ պէտք է դիպած լինէր: Ամեն մէկը շօշա-
փեց ինքն իրեն: հչ ոք չէր վիրաւորւած:

— Թո չիրուխն է կոտրւել, աղաղակեց Սի-
մոնն Արամին՝ ուրախ ձայնով: Շատ էժան ես
պրծել:

Արամը մտածման մէջ ընկղմւեց: Բերնի-
ցը հանեց չիրուխից մնացած վերջին կառը և
գետին նետեց՝ բացականչելով. «անհոգ կաց,
բարեկամ, վրէժդ կը լուծեմ»: Այլ ևս չկարողա-
նալով տեղումը մնալ, նա ոտքի ելաւ և վազեց
թշնամուվրայ: Մենք իսկոյն հետնեցինք նրան:
Նա խօլական կատաղութեամբ յարձակւեց աս-
կեաբներից մէկի վրայ և սէինով գետնին գամեց
նրան: Երկրորդ տակեարը, կողմնակի ոստում անե-
լով, վերցրեց իր հրացանն ու կոթովը հար-
ւած իջեցրեց Արամի ուղիղ դէմքին, բայց
անժիշտպէս ընկաւ Սիմոնի սւինի տակ, որ մի
քիչ ուշ տեսնելով գտանզը՝ չէր կարողացել այս
հարւածն արգելել: Ինչ վերաբերում է քիւրդին,
մեր մօտենալուն պէս՝ նա մի կողմ շպրտեց

հրացանն ու ձեռքերը բարձրացնելով՝ կոկորդա-
յին ձայնով «թէսլիմ, թէսլիմ» աղաղակեց:

Այս ամենը կատարւեց աւելի կարճ ժամա-
նակում, քան հարկաւոր է դէպքը նկարագրելու
համար:

Գետնի վրայ պառկած էր ասկեարը՝ գերազ
գիո ջղայնութեան մէջ: Թիւրդին ձեռք ձգելուց
յետոյ դարձայ դէպի Արամը որի դէմքից արիւն
էր հոսում: Հարւածը ճիշտ բերնին էր դիպել և
երեսն արիւնով ներկւած էր:

— Ի՞նչ անեմ. ինչ անբախամարդ եմ,
արտնջում էր նա. երբէք չեմ կարողանալու գրա-
նման չիրուխ գտնել: Անիծած թիւրքեր. կոտ-
րեցին իմ չիրուխը, իմ միակ ուրախութիւնը,
միակ մխիթարութիւնը, կրկնում էր նա յու-
սահատ:

— Դրան տես. չես ամաչում, ասում էր
Արամը, փառք տուր Ոստծուն, որ թիւրքերը
չիրուխդ կոտրեցին և հչ թէ դէմքդ:

Արամն այդ ըոսպէին մոռացել էր իր ցա-
ւը, վէրքի մասին չէր էլ մտածում մասհոգւած
լինելով միայն իր չիրուխի կորստով: Ճիշտ է,
և ամբողջ բանակը դիտէր, որ Արամը կարող
էր չուտել, չմմել, միայն թէ ծխախոտ տային
նրան: Նրա ծխախոտն առասպելական էր դար-
ձել, և նա երբէք չէր ձգում նրան: — Եթէ սպան-
ձել,

ւեմ, սիրում էր նա կը կհերթի, ինձ կը թաղէք իմ չիբուխի հետ միասին:

Մի հեռաւոր հրացանաձգութիւն լսւեց: Թիւրքերն էին, որ օգնութեան էին գալիս իրենց մարդկանց: Այդ ըսպէին մի զինւոր եկաւ և յայտնեց մեզ, թէ խմբավետը մեզ հրամայում է միանալ: Մեր արշաւանքի նպատակն էր հետախուզութիւն կատարել, և հիմա որ այդ գործը կատարւած ու վերջոցած էր մեզ համար այդքան բարեյաջող կերպով, մեզ այլ բան չէր մնում, եթէ ոչ վերադառնալ:

Հաւաքեցինք սպանւած թիւրքերի հրացանները, կապեցինք և բարձեցինք քիւրդի վրայ, որ ապուշ կարած կանգնել էր մի կողմ, որպէսզի տանի: Մեր առջևից քշեցինք նրան իր բեռովն ու ցոյց տւինք ճանապարհի ուղղութիւնը՝ յանձնարարելով, որ փախչելու փորձ չանէ, եթէ ուզում է ողջ մնալ: Վայրէջքն այնքան գահավէժ էր, որ սկսեցինք սահել ձիւնի վրայից:

Այժմ քիւրդի յոգնած գիմագծերի, անասնական դէմքի վրայ, նրա շիլ աշքերում, պորսած շրթունքների վրայ նկատելի էր բոնւած գաղանի սարսուոր: Ինչպէս բոլոր քիւրդերը, նա աւելի շարժ ու ձեւրով էր արտայայտուում, քան խօսքերով, դիմախաղեր անելով ամեն մի խօսքի համեմատ, միշտ սիրալիր էր ցոյց տալիս իրեն՝ շահագրգութիւնից, խորամանկու-

թիւնից, և մեր անհաճոյ կոմպլիմենտներին մեղմութեամբ էր պատասխանում: Նրա ձայնի շեշտը, այդ ոնդային, բոլորովին արևելեան առօգանութիւնը ամեն բանից աւելի տպաւորիչ էր ինձ համար:

Նրան այդպէս խղճուի, խոնարհ, այդպէս համեստ տեսնելով՝ քիւրդի հոգեբանութեանն ու հոգուն անտեղակ մարդը կարող էր խարւել և մեղմութիւն ցոյց տալ: Բայց մենք գիտէինք, որ գա կեղծիք էր քողարկւած շողաքորթութիւն, որովհետեւ բոնւած, զինաթափւած, անզօր էր զգում իրեն. և եթէ նա մի գաշոյն ունենար և մենք մտացրիւ լինէինք, չէր վարանիլ մեզ նենգօրէն սպանել՝ մեզ հպատակութիւն երդւելուց յետոյ, մեր կօշիկները համբուրելուց յետոյ:

— Խմբապետը գոհ կը լինի, ասաց յանկարծ Սիմոնը, որ մի ողջ քիւրդ գերի վերցրինք:

Շուտով նշմարեցինք մեր խումբն ու միացանք ընկերներին: Խմբապետը հաճոյախօսութիւններ ասաց և գովից Արամին՝ թշնամու հանգէպ իր քաջութեան համար, բայց նա մնում էր լուռ, չկարողանալով մոռանալ իր շիբուխը:

— Այս, ասում էր նա, էլ էղպէս չիբուխ չեմ զանի. մենք էնքան թիւրք չշարդեցինք, որ իմ հին բարեկամի վրէժը հանէինք: Խեղճ շիբուխ. էլ մտքիցս չի ընկնի:

արագ, օձի պէս գալարում, սողում է Եփրատը, որ իր ջրերի մէջ քշում էր մեր եղբայրների զիակները: Իսկ աւելի գէնը, այնտեղ, լեռան վրայ ուրւագծում էր մի գորշ կերպարանք—դա Ս. Յովհաննու աւագ քոյրն էր—Ս. Կարապետ:

Վեր բարձրանալով՝ վերջապէս հասանք Ս. Յովհաննու վանքը: Ես ցնցւեցի հորիզոնի խստութիւնից, որը այնքան դիտած կը լինեն՝ այժմ իրենց աչքերը յաւիտենապէս փակած վանականները—ոմանք թէև զբաղւած միայն հանդերձեալ կեանքով, բայց նրանք էլ այդ վարդագոյն եթերից անշուշտ կընդնշմարէին դրախտի միրաժները. ուրիշները՝ գիտնականներ, բանաստեղծներ, պրոպագանդիստներ, երազում էին այստեղ, անդորրութեան մէջ, գեղարւեստի, բանաստեղծութեան, հայրենիքի և ազատութեան մասին:

Թւում էր, թէ այս խաղաղ, փակ վայրը ստեղծւած է մաքի յղացումների համար: Երկար պեղերում էի Ս. Յովհաննու վանքի այս մատուցումների շուրջը՝ սքանչանալով այն բոլոր ջանքերի վրայ, որը գործադրած կը լինեն այստեղ քաշւած վանականները:

Այժմ վանքը բոլորովին աւերակ է, մի ողբերգական ուրւական—տանիքը ճեղքւած, ճաթած, պատերը շնչահեղձ կը լինեն այստեղ:

Ս. ՅՈՎՀԱՆՆՈՒ ՎԵՐԵԼՔԸ

Մի ժամ էր, որ քայլում էինք և արդէն բարձրացել էինք մի բլուր, երբ կանգ առայ: Հակած մի հեղեղատի վրայ, գտնում էի ժայռի բարձունքին, երբ իր գեղեցկութեամբ յուզիչ մի դաշտանկար պարզւեց աչքիս:

Թէ ըոպէի լըջութիւնն ուրիշ հոգսեր էր հարկադրում, որովհետեւ թիւրքերն ահա այնտեղ էին, շատ մօտ, ես չէի արողանում հեռանալ այդքան հզօր հրապոյըներից:—Հորիզոնը խոր հրդի և թովչանքի մի ծով է, որը գիտելուց չէ կարելի հրաժարւել, եթէ նոյնիսկ անէանաս նրա մէջ:

Այնտեղ, վարը, մեր ոտքերի տակ է մեր գիւղը՝ շրջապատւած սրբնթաց հոսանքներով, որոնք այստեղից շատ աննշան էին երեսում. իսկ աւելի հեռուն տարածւում էր, անծայր՝ իր ամբողջ շքեղութեան մէջ, երբեմն ին դալից, Մշոյ դաշտը, որ այսօր միայն մի լայնածաւալ գերեզմանոց է: Կասէիր՝ մի հսկայական կրկէս՝ բոլորւած աստիճաններով, որոնք բարձրանում են գէպի ամֆիթատրոնները, և մէջտեղից՝

ներս մտայ, տեսայ ջարդւած սրբանկարներ, պատառուած նւիրական պատկերներ, թաթախւած, կեղառվ պղծւած պատեր, մէջտեղը՝ արխիւը, ձեռագիրները, նշխարներն ու մասունքը թափթփած՝ այրւած, կտրատւած, կօխոտւած։ Խորանի մօտ դեռևս չոր խոտ կար ցանցնւած և թիւրքերը գոմի էին վերածել նրան։

Եւ գարերից գեղնած այս վանքը, որ գիշեցել էր արարների, պարսիկների և ուրիշ շատ բարբարասների արշաւանքներին, ընկճւած էր թիւրք հորդաների կատաղութեան տակ։ Նա հնուց ի վեր կանգնած էր՝ ապաստան տալով մեր գրականութեան, պահելով մեր բանաստեղծութեան գանձերն ու մարգարիտները. իսկ այժմ մահացած էր իր վէրքերից։

Օրը տարաֆամ էր, և երեկոյեան սուեր ներն ընկնում էին լեռների, ինչպէս կոպերն աշքերի վրայ։ Շատ անզամ պահակ կանգնելով գիշերը, պայծառ լուսընկային, հոգուս մէջ ամբողջովին պատկերացնում էի վանքի նախկին կեանը. կարծում էի լսում եմ զանգի զօղանջը, որ երկար գարեր գիշերային հսկումի էր կանչել վանականներին. թւում էր, թէ տեսնում էի նրանց լուս առաջանալիս։ Մէկ էլ տիրող խաղաղութեան միջից զանգի ձայն լսեցի։ Մտամոլոր, ականջ զրի այդ տարօրինակ ժխորին։ Այժմ աւելի լաւ էլ լսում. նա աւելի որոշ էր դառ-

նում, մօտենում էր. ահա այստեղ է, շատ մօտ Յանկարծ կարծեցի, թէ ծանօթ է այդ զօղանջը—այն, անշուշտ, ճանաչեցի նրան—իմ երկրի զանգն էր հնչում։

Եւ այդ հնչիւնները գալիս էին միշտ աւելի յստակ, կը կնապատիկ ոյժով։ Այն ինչ սիրու է, որ երբէք չէ ցնցւած իր ծննդավայրի զանգի զօղանջներից. զօղանջներ, որոնք ձեզ կարող են խորասուզել գիւթիչ երազանքի մէջ։ Մեր կրօնը, մեր հայրենիքը, մեր անցեալլ—ամեն ինչ վերաբարտադրուում է զանգի այդ հնչիւնի մէջ։

Երկար կանգնած մնացի՞ սուզւած կախարդական այդ երազանքի մէջ, երբ յանկարծ մի աղմուկ վերակոչեց ինձ դէպի իրականութիւնը։ Թէև ոչինչ չէր նշմարւում, բայց սարսուռը պատեց ինձ։ Շատ մօտիկից քայլւածքի ձայն էի լսում։ Ակընդէտ՝ բռնեցի սուլիչը։ Զառանցմնք էր, թէ թշնամին էր մօտենում։

Չորս բոլորս էի նայում՝ զննելով խաւարը, փորձելով գուշակել վաանգը, երբ մի ձեռք շօշափեց իմ ուսը, և ուրւականի պէս իմ առաջանկւեց կարօն, որին իսկոյն ճանաչեցի իր ուրւագծից։

Կարօն, մօտ երեսուն տարեկան էր, թէև աւելի տարիքոտ էր թւում։ Գրեթէ սպիտակ մազերը զարմանալի հակապատկեր էին կազմում երեսութապէս երիտասարդ դիմազծերն՝ չը-

նայած մի քանի կնճիռներին, որոնք ակօսում էին նրա ճակատը. Նիհար, ընկճւած, թախծոտ ու միշտ լուրջ դէմքն իսկապէս սոսկալի տեսք էր տալիս նրան, և բռնակում հոչակ հանած իր քաջագործութիւնները նրա անւան շուրջը մեծ յարգանք էին ստեղծել ընկերների միջև։ Ունէր սկ ու փայլուն աչքեր, որոնք նոյնքան լաւ էին տեսնում գիշեցը, ինչպէս ցերեկը։ Երկու ձեռքերն էլ հաւասարապէս ճկուն ու անվրէպ էին, մի բան, որ հնարաւորութիւն էր տալիս նրան միաժամանակ երկու ձեռքով կրակել։

Ընկերները պատմում են, որ մի՞օր թշնամուց պաշարւելով մի հովտում, նայանիւծիպէս է պաշտպանւել, մինչև այն բոպէն, երբ աջ ձեռքից վիրաւորւել է։ Չնայած, որ առատ արիւն էր կորցրել, բայց և այնպէս շարունակել է կրակել ձախ ձեռքով, և այնպիսի ճշտութեամբ, որ թիւրքերը ստիպւել էին նահանջել։ — Նրա Փիզիքական կազմը կարողանում էր տոկալ ամենայոգնեցուցիչ արշաւանքներին և դիմանալ այնպիսի սուր զրկանքներին, ինչպէս են քաղցն ու ծարաւը։ Վարժւած լինելով աննախատեսելիին և ամենավտանգին սովոր՝ նաշշարունակ ծիու վրայ էր լինում։ Կարօն գնում էր կուելու այնպէս, ինչպէս ուրիշներ կը գնային իրենց գրասենեակը, վստահ իրենց յաղթութեան վրայ։

— Զեմ կարողանում քնել, ասաց նա մօտենալով. եկայ թափառելու։

Մի քար վերցրեց գետնից և նստեց։ Ես շուտով հասկացայ, որ իմ ընկերոջ հանգսառւթիւնը միայն երեսութական էր, և որ տրամութիւնը համարկել էր նրան։ Կռահեցի, որ նա մի գաղտնիք ունէր, հոգու խորքում մի ծածուկ մտածմունք, որ տանջում էր նրան։

— Ի՞նչ ունիս, չինի՞ թէ վէրքդ ցաւում է—հարցրի մի քիչ յետոյ։

— Ո՞չ, ոչ, պատասխանեց նա աշխոյժ։ Բայց և չգիտեմ, թէ ինչ ցաւ ունեմ։ Այս վայրերը, այս լեռները իմ մէջ այնքան յիշողութիւններ են արթնացնում, անցեալից այնքան դէպքեր, որ չեմ կարողանում նրանց տեսնել ու չհառաչել, չերազել այն ժամանակը, երբ...

Այդ չարագուշակ ժամին, սկ գիշերով, գիրք բռնած այս բարձունքի վրայ, կարօն գերազբդուած յիշողութեան առջև մի առ մի պատկերանում էին իր հայդուկային կեանքի էպիզոդները։ Ինչպէս ջրի մէջ խեղդւողներն իրենց ամբողջ կեանքն են վերյիշում վերջին ըոպէներին, կարօն մտքումը վերարտազրում էր իր գիւղը, երբ հեռացաւ նրանից զինւոր գրւելու համար. յիշում էր գաղտնի համախմբութերը, առաջիկայ կոփւր. նա վերապրում էր այն ընդ-

հարումը, որին մասնակցել էր ինքը, իր ձերբակալութիւնը, բանտն ու վերջապէս՝ փախուստը:

— Երբ ինձ աջողւեց փախչել, շարումակեց նա, և ոստիկանութիւնը սկսեց հետազնդել ինձ, կեանքը դժոխք դարձաւ ինձ համար: Ստիպւեցայ թագնւելու շուտ-շուտ բնակարան փոխել, նոյնիսկ գիշերը մի քանի անգամ՝ ինձ հետևողներին մոլորեցնելու նպատակով: Եւ երբ բանտի զաղբելի պատերն էին գալիս աչքիս առջև, երբ յիշում էի լուսթիւնը, այն սոսկալի լուսթիւնը, որ իշխում էր այդ կենդանի գերեզմանում, ցասումի սարսուռ էր անցնում մարմնովս. բանտն անկասկած խելազար կը դարձնէր ինձ: Վճռեցի մեկնել, հեռանալ այդ շրջանից և ինձ ձգել այս լեռների մէջ, ուր քար, եղաւ իմ բարձը, և ուր ցուրտ գիշերն էր թագնում ինձ՝ իր ձիւնային սպիտակ վերմակի տակ:

Նա կանգ տուաւ: Եղանակը ցրտեց և քամին գգւում էր մեր դէմքը: Ամեն ինչ անդորր էր թւում, թախծու, խաւարամած, միայն հեռւից գայլերի ոռնոցներն էին հասնում մեզ: Եւ այս չարագուշակ գիշերը, երազում էի կեանքի բոլոր զեղեցիութիւնները, այն ամենը, ինչ տառածային ստեղծագործութիւնն է որտառ զրել. զգացի, որ ինքնաւահպանման բնազդն էր այցի գալիս ինձ: Այժմ ուզում էի ապրել, ցանկանում էի դեռ վայելել այն կախարդիչ բաժանում:

կից, որ կոչում է կեանք, և որ իր խորքերում այնքան փսեմ խորհուրդներ ունի:

— Տեսնում ես, ասաց նա՝ յանկարծ ընդհատելով լուսթիւնը, դու չես կարող սիրել այս վայրերը, դու չես կարող զգալ... մինչդեռ մենք, որ ապրել ենք այստեղ, ջարդել ենք թիւրքերին, երբ հետազնդելով ապաստանում էինք այս քարերի յետեր, որոնցից ամեն մէկը թանգ է մեզ համար, որովհետեւ դեռ կրում է մեր կուի տաք հետքը: Այստեղ է, որ հաւաքւում էինք անհաւասար կոփւ մղելու՝ ոլաշտպանելու համար հայ գիւղերը քրդական յարձակումների գէմ. այստեղ է որ կուել ենք մեր ժողովրդի գիշերը պաշտպանելու համար: Տեսնում ես, այդ ըլըի թիկունքին,—և ձեռքի մի շարժումով նա ցոյց տւեց Սասունը—այնտեղ եմ անցկացրել իմ վայրենի կեանքը՝ միայն զիշերներն իջնելով զիւղը. այնտեղ է, որ ապրեցի աքսորի երկար տարիները... Եւ ստիպւած էի բաժանւել ծնողներից, բարեկամներից, զիւղից, ստիպւած էի հեռանալ, փախչել...

Ես ապշեցի՝ սեսնելով այդ մռայլ դէմքի վրայ, — որ այնքան վտանգների միջով է անցել, — արտասուքի երկու կաթիլներ, երկու խոշոր ու ծանր կաթիլներ գլուրեցին:

Երգւում եմ, որ երբէք չեմ մոռանալ հայդուկի այդ արցունքները...

ԸՆԴՀԱՐՈՒՄ

Թիւրքերը, որոնք շարունակ թարմ ոյժեր էին ստանում Տիգրանակերպից, լուրջ մտահոգութիւն էին պատճառում Ն.-ի զօրաբանակի շտաբին։ Մեր պահակների կատարած հետախուզութիւնների և գերիների պատմածի համաձայն, թշնամին նոյնիսկ յարձակման էր դիմելու մեզ վրայ։

Արդէն վերջացել էր Փրանս-անգլիական բանակների արշաւանքը Գալլիպովում, և մեր գաշնակիցները ստիպւած էին հեռանալ նեղուցներից։ Այդ ըստէից սկսած՝ թիւրքերը, որոնք այլ ևս ոչ մի վախ չունէին Պոլսի մասին, իրենց ամբողջ ազատ ոյժերն ու պահստի զօրքերը փոխադրեցին Կովկասեան ճակատ, ուր նրանք պատրաստւամ էին ընդհանուր յարձակում գործելու։ Խալիլ-բէյը, որ հրամանատարն էր մեր ճակատի թշնամու ոյժերի, նախ պէտք է ճեղքէր մեր զծերը, երկու մասի բաժանէր մեր բանակը, և կրկնէր 1914 թւականի Սարիդամիշի հարւածը, այսինքն՝ երկու զօրաբանակ արագ առաջապացութեան մէջ դնելով՝

ստիպէր մեզ, որ նահանջենք մինչեւ մեր սահմանը, որպէսզի չշրջապատենք։

Թիւրք բանակը, որի դէմ պէտք է կռւէինք, շատ կարճ ժամանակամիջոցում կատարեալ կտղմակերպման էր ենթարկել։ Նոր զօրախմբերը, որոնք այժմարշաւում էին մեր դէմ, երկար մնացել էին Պոլսում, ուր զինուրական կրթութիւն են ստացել գերմանացի սպահերի ձեռքով։ Եւ սակայն, չնայած կրթութեան և թիւրք գնդերում գերման սպահերի ներկայաւթեան, ասկեարները շարունակում էին կատարել իրենց գործը՝ կոտորելով հայերին, կողոպաելով, այրելով, բռնաբարելով։ Այդ ամենը կազմում էին թիւրք բանակի անջնջելի աւանդութիւնները, և գերմանացիներն երբէք չուզեցին ընդդիմանալ այդ նւիրականացած սովորոյթին։

Մէկ կողմ թողած այդ վայրենի բնագդները, թիւրքը գերազանց զինուոր է կռւի մէջ, և չնայած այն դժնդակ պայմաններին, որոնց մէջ նա ստիպւած էր կռւել, գնահատելի միաւոր է կազմում զինուորական տեսակէտով՝ լինելով քաջ, գուցէ աւելի ֆանատիկ, քան քաջ, բայց և այնպէս խիզախ սիրագործութիւններ էր կատարում։ Մի կազակ գնդապետ, որ հրամանատար էր պլաստունների մի նշանաւոր վաշտի, և որ Գէորգեան խաչի պատւանցանն էր ստացել թրկմտեան ճակատում, հաւաստեց ինձ, որ թիւրք

ասկեարը նոյնքան լաւ է կուռում, ինչքան աւստրիական ու գերմանական զինուորը:

Առաջն առնելու համար ամեն մի յարձական, որ կարող էր մեզ համար աննպաստ վերջաւորութիւն ունենալ, որովհետև թշնամին շարունակ նոր ոյժեր, մեծաքանակ հրետանի և ուզմամթերք էր ստանում,—վճռեց, որ մեր խումբը յարձակման ձեռնարկէր՝ այն նպատակով, որ թշնամին ստիպւէր անձնատուր լինել և ապա, եթէ հանգամանքները ներեն, դրաւել թշնամու դիրքերը:

Այն լեռնային շրջանը, որը դիմագրաւելու էինք, մեզ հնարաւորութիւն չէր տւել նոյնիսկ գնդացիրներ տանելու մեզ հետ: Մեկնեցինք ձմրան մի ցուրտ օրով, նեղ արտհեաներով բարձրանալով լեռներն ի վեր, մինչև որ հանդիպեցինք թշնամուն: Կոիւը սկսեց մթնշաղին և թիւրքերը ստիպւեցին նահանջել մեր կամաւորների թափի առաջ, մեր ձեռքում թողնելով իրենց խրամատները և լքելով իրենց բոլոր բարձունքները: Բայց թիւրքերը շուտով ստացան օժանդակ ոյժեր, որոնց միացան և քիւրդական բազմաթիւ հրոսախմբեր. վերադառնալով նրանք յարձակման դիմեցին, քանից հակայարձակում գործեցին, չսայած իրենց մեծ կորուստներին, և վերջ ի վերջոյ կոիւը դարձաւ մի ընդհարում,—մի կողմից թւի վերազանցու-

թեան և միւս կողմից յամառ տոկունութեան միջն: Արդարե, մեր կամաւորներն արևելեան սաոյիկութեան ապացոյցը տւին իրենց պաղարին արիութեամբ, անընկճելի վճռականութեամբ և մնացին այդ գժոխային կրակի տակ:

Մեր զինուորներն օգտւում էին ամեն մի քարից՝ նրա ետևը կծկելու համար, միաժամանակ շարունակելով պաշտպանւել: Գնդակները խուներամ անցնում էին՝ սուր ձայներ արձակելով, և պէտք եղաւ գերբնական յամառութիւն՝ դիմադրելու այդ տեսական հրածգութեան, այդ անընդհատ փորձերին՝ յարձակումը վերսկսելու և հողի ամեն մի թիզը վերագրաւելու նպատակով:

Բայց թւում էր, որ դիմադրութիւնն աւելանում է, որովհետև կրակն ամեն բոպէ աւելի էր ուժեղանում: Մերթ ընդ մերթ մի անխոհեմ թիւրք էր երևում. անմիջապէս մի գնդակ ճեղքում էր նրա կուրծքը, և նա միւս կողմի վրայ էր ընկնում, կարծես հսձւած լինէր: Թիւրքերը պատրաստում էին զրոհի՝ տեսնելով, որ իրենց ոյժը բաւարար է և շարունակ նոր զօրքեր էին հասնում, բայց մեծ կորուստներ էին կրում. մեր ամեն մի փամփուշտը համնում էր իր նպատակին և տապալում մէկին: Մեր կամաւորներն եմանում էին ճիշա խփել նշանին:

Թշնամին չկարողացաւ առաջանալ՝ չնայած
Յ

Արդարեւ, այդ մի սպայ էր, որին դժւար չէր զանազանել իր փայփլուն համազգեստից, մի ձեռքում թուրը բռնած՝ հեղինակաւոր ձայնով հրաման էր տալիս իր զինուրներին:

— Գլխին եմ նշան բռնում, նախազգուշացրեց կարօն, և իրօք, գնդակը դիպաւ սպայի ճակատի մէջտեղը. նա վայրկենապէս մեռաւ:

— Քէօսայի մահից յետոյ դա տասներորդն է, ասաց կարօն, դեռ մի իննառւն հատ էլ պէտք է գլորել այդ շներից:

Յանկարծ մի խեղդուկ ճիչ լսւեց մեր կողքին: Հազիւ ժամանակ ունեցանք դառնալու և տեսնելու մի ուրեագիծ, որ երերում է և ծանր ընկնում է գետինը:

Հաջկինայն էր խփել: Նրան դուրս հանեցին խրամատից և մի քիչ յետ քաշեցին: Գնդակը նրա կրծքի մի կողմից միւսն էր անցել և տեսանք, որ այլևս փրկութեան ոչ մի յոյս չըկայ:

Նա բացեց աչքերն ու տեսաւ իր առջեր կանգնած խմբապետ Դալի-Ղազարին: Նա ճիկ արեց գրպանից մի թղթապանակ հանելու և դողդոջուն ձեռքով նրան երկարեց:

— Ա՛ռ, ընկեր, պահիր այդ, և մի կորցնիր, նրա մէջ կայ մի... մի...

Նա չկարողացաւ վերջացնել խօսքը. արիւնեկաւ բերանից. խեղդում էր: Էլ չկարողացաւ

Եր բոլոր ճիգերին: Բայց մենք էլ սկսեցինք կորուստներ ունենալ մեր շարքերում: Եապոնը վիրաւորւած էր գլխից. արիւնը հոսում էր նրա այտերից և կուրացնում նրան, Սակայն նա չուզեց կանգ առնել. նա չէր զգում իր վէրքը. միայն կուել էր ուզում:

Աւելի հեռուն, քաջ Քէօսան Մջապատւել էր թշնամուց և տեսնելով իր անխուսափելի վախճանը, որոշել էր կարելիին չափ շատ թիւրք սպանել՝ ուզելով, որ իր մահը հատուցի թշնամու կողմից զզալի կորուստներով: Մօտ երեսուն դիտկներ էին սփռւած նրա առաջ, երբ մահացու հարւած ստացաւ մի գնդակից, որ անցել էր իր գլխի միջով:

Հին հայրուկը, որ տասնեակ աարիներ իր կոշտացած կաշին քարշ էր տւել Մշոյ դաշտից մինչև Ուրմիոյ լիճը՝ կուելով թիւրք ժանդարմների, քիւրդերի դէմ, արհամարհելով վտանգը, տոկալով անքնութեան, ցրտին, ծարաւին, քաղցին, ընկաւ այդ գնդակից, որ մեր միջից վերացրեց մի անկեղծ ու անձնւէր բարեկամի և զրկեց հայրենիքն իր ամենաջերմ պաշտպանների մէկից, որ չվարանեց իր արիւնը թափել նրա համար:

Գնդակների թաք-թաքը շարունակւում է:
— Տղէրք, կանչեց կարօն, այդ սպան չափազանց անզգոյց է:

խօսել, միայն բացեց աչքերն ու սևեռուն ակնարկ ձգեց թղթապանակի վրայ:

— Անհնագ կաց, Հաջի, ասաց խմբապետը:
Քեզ կուղարկենք քո գիւղը, ուր լաւ կը խնամեն քեզ. դու կը տեսնես ձերոնց և ապա կը վերադառնաս: Գիտես, դեռ պէտք է կուենք քեզ հետ միասին՝ թիւրքերի դէմ:

Խմբապետը ստում էր. ուզում էր վստահացնել նրան, հանդարտեցնել, բայց իր հոգու խորքում գիտէր, որ ամեն ինչ վերջացել է և թէ այլևս յոյս չկայ: Բայց մահամերձը հասկացաւ. նա զգում էր, որ մեռնում է, և միայն զլսի մի բացասական թեթև շարժումով պատասխանեց.

— Հաջկինայն էլ չի գնար կուի:

Նրա աչքերը, նախքան յաւիտենապէս փակելը, դեռ ատելութեան ցոլքեր էին արձակում: Թիւրքերի դէմ նրա մշտական ըմբոսացումը երևան էր գալիս և հոգևարքի ժամին: Նրա աւբողջ մարմնի միջով մի երկար սարսուռ անցաւ, և կարծեցինք, որ ամեն ինչ վերջացաւ: Բայց մի զղային ոյժ դեռ պահում էր նրան:

Դա գերագոյն ճգնաժամն էր: Դժգոյն ու ծանրացած ձեռքերը բարձրացան դէպի իր հրացանը և ուզեցին վերջին անգամ կրակել, բայց ընկան անգօր. Աչքերն արիւնով ողողւեցին, բե-

րանը կծկւեց և մի քանի խեղդուկ հեռացից յետոյ՝ վերջին հառաջը թռաւ թեթև շնչի պէս:

Ընկերներից մէկը նրա ձեռքերը դրեց կրծքի վրայ, որ այլևս չէր բարախում: Նա ի զուր կեանքի մի նշան էր որոնում նրա մէջ:

Եւ երբ դժբախտ ընկերոջ մարմինը հեռացւեց, քրքրեցինք իր թղթապանակը՝ տեսնելու, թէ ինչ էր այն թանկագին առարկան, որի մասին հանգուցեալն այնքան մտահոգ էր: Բանալիս՝ մի լուսանկար ընկառ—իր նշանածի պատկերն էր...



ԱԼԵՔՍԱՆԴՐԻ ՄԱՀԸ

Կոփւը վերջացաւ, և յաղթութիւնը մասց
մեր կողմը: Այս ժամանակ վերցրինք վիրաւոր-
ներին, որոնց մէջ էր Ալէքսանդրը, որը փորից
վիրաւորւել էր գնդակով:

Մօտեցանք այդ անշարժ մարմնին, որին
հսկում էր ընկերներից մէկը: Վիրաւորն իր չորս
կողմն էր շըջում տարտամ ու մռայլ խոր-
հրդաւորութիւն ունեցող ակնարկները, ջղոտ
ձեռքերի մեքենական շարժումով մէկ շտկում,
մէկ էլ վերցնում էր իր վրայ ձգւած վերար-
կուն: Տենդը բռնել էր նրան: Նրա գլխում զա-
նազան մտքեր էին գալիս ու գնում, և նրա
երակներն այնպէս էին խփում, որ կարծես
գլուխն էր պայթելու:

Շրթունքները սեղմած, որպէսզի ոչ մի տըր-
տունջը չլսեի, սպասում էր իր վախճանին: Նա
լսել էր բժշկի ախտանշանը և գիտնալով, որ ար-
դէն դատապարտած է մահւան՝ փորձեց մի բան
կարդալ մեր դէմքի վրայ: Վերկենալու ճիգ անե-
լով նշանացի հասկացրեց կողքին ծնրադրած ըն-
կերոջ, թէ ուզում է խօսել: Նրա այրւող շըր-

թունքները հազիւ բացւեցին, և մի թոյլ ձայն
դուրս եկաւ կոկորդից: Լուս լսեցինք մահա-
մերձի վերջին խօսքերը:

— Յաղթեցի՞ք, հարցըրեց նա՝ հազիւ լսելի
մրմունջով:

Այս կամաւորը, որ մառնում էր ցուրտ գետ-
նի վրայ, հեռու հարազատներից, միայն մի մտած-
մունք ունէր, միակ մտասանջութիւն: Ուզում
էր իմանալ միայն, թէ ջախջախել ենք թիւր-
քերին:

— Այս, այս, աշխոյժ պատասխանեց Խե-
չօն. Ջարդեցինք նրանց, վրէժդ լուծեցինք, սի-
րելի ընկեր. երգւում եմ, որ էլի կը լուծենք
քո վրէժդը:

Ալէքսանդրի շրթունքների վրայ մի ժպիտ
փայլեց: Օ՛, դա բնական ժպիտ չէր, դա մահա-
մերձի ժպիտն էր, մի ծամածուութիւն, որ միա-
ժամանակ բովանդակում է և գոհունակութիւն,
և վրէժինդրութեան արտայայտութիւն: Նա իր
մահւան մէջ տանում էր այն նւիրական խոս-
տումը, որ արւած էր կիսաբաց մի շիրիմի
առաջ:

Նա դեռ շատ անգամներ բացեց աչքերը և
նայւածքը շըջեց ընկերների վրայ, որոնք շըջա-
պատել էին նրան: Այժմ նա գոհ սրտով էր մեռ-
նում, մեռնում էր հպարտ այն փառաւոր մա-
սով, որով ընկան իր մեծ խմբապետները, եր

համախոները. այժմնրա հոգսը չէր տառապանքը, քանի որ գիտէր, թէ թիւրքերը ջախջախւած էին:

Յանկարծ նա ցնցւեց մի ջղաճդութեամբ, սարսուռով. ուզեց կանգնել, ոտքի վրայ մեռնել, բայց ոյժերը դաւաճանեցին նրան, և ընկաւ դէպի յետ՝ շանթահարւած այդ վերջին ճիգից.

Ալէքսանդրը մեռաւ: Այս, նա էլ զոհւեց Գաղափարի, Ազատութեան համար. մեռաւ այնպէս, ինչպէս միայն հայ կամաւորը գիտէ մեռնել: Նրա ծնողները գեռ երկար ժամանակ կը սպառեն գիշերով իրենց զաւակի վերադարձին, որ իր աչքերը փակեց այս կորած անկիւնում: Նրա շիրիմը չէ զարդարւելու խաչով, և ծաղիկներ չեն ցանւելու նրա վրայ. բայց ամենքիս սրառում յափառեան դրոշմւած կը մնայ նրա քաջ պազմիկի անսւնը:



ՔՐԻԱԿԱՆ ԵՐԱՇԽՏՈՒԹԻՒՆԸ

Այդ գիշերը մի քանի ընկերներով պահակ էինք կանգնել: Այն տեղը, որ հաւաքւել էինք, գտնուում էր մեր գիւղից քիչ հեռու մի լեռան վրայ, որ իշխում էր ամբողջ գտառովն: Հետեւս բար, թշնամին չէր կարող անցնել այդ ճանապարհով՝ առանց նկատւելու մեր կողմից, և ամենափոքր վտանգ պատահելիս ազդանշան պէտք է աայինք:

Մի քանի աւելրակ տներ էին, որոնց մօտ շինել էինք մի տեսակ վրան: Զնայած սատիկ ցրտին, արգելւեց կրակ վտան, որպէսզի թիւրքերի ուշադրութիւնը չգրաււի:

Անուշ լաւսինն ու գողտրիկ ասաղերը փայլում էին այդ ամայի, մեռած, կարծես սպաւոր երկրի վրայ: Շուրջը տմբողջովին սպիտակ էր, զարհուրեցի և միափառանակ հոյակապ: Ամեն ինչ հանգիստ էր: Այս շատ բարձր ու մաքուր օդում ձմեռային մելամաղոտ քամի էր բարձրացել, որ ցուրտ ու ողբագին դեգերում էր մեր խմբի շուրջը, և ես որոշ չափով դժւարանում էի չերազել:

Այստեղ, այսպիսի գիշերով միթէ կարելի էր խոր ու լրջօրէն չսորհրդածել մեր ճակատագիր մասին։ Երջանիկ են այն ժողովուրդները, որոնք կարող են վայելել շարունակ նրանց ընկերակցող խաղաղութիւնը, իսկ մենք՝ հայերս... Եթէ մելամաղձոտութիւնն է ռազմաւորւում մեր սրտերում, չե՞ որ դա նրանից է, որ սեփական երկիր չունինք։ Միթէ կարելի է, որ սիրու չարինի՝ դիտելով գեղատեսիլ Հայաստանը, հայրենի հողը, այս լեռները, դաշտերը, գետերը, այս գիւղերը, որոնք այնքան մօտ են մեզ, այնքան անուշ, և որոնք պէտք է պղծւած լինին վայրենի հորդաների ձեռքով։ Ինչու իրաւոնք չունենանք ազատ շնչելու այս երկրում, որ մերն է ամենահին ժամանակներից ի վեր, այն ժամանակներից, երբ մեր նախնիքները նրան պաշտպանում էին օտարի աչքից։

Ինչու մեր զաւակներն այսուհետև չապրեն այս հայրենիքում, ուր հողի ամեն մի թիզն ողողւած է հայի արիւնով։ Ինչու արիւն պէտք է թափէ կամաւորը, եթէ Հայաստանը պիտի մնայ օտար լծի տակ։

Մեր ժողովուրդը պէտք է վայելէ ազատ ապրելու և շնչելու ուրախութիւնը՝ դիտակներով շանցնած այս երկրում, այս լայնատարած գերեզմաններում։ ամայացած Հայաստանում պէտք է փթթեն բարգաւաճման ամենագեղեցիկ

ծաղիկները, և ես այդ արշալոյսն եմ նրան ռւղարկում այս գիշեր, այս քամուն, որ թւում է, թէ աւետում է այդ ազատութիւնը, և գինովցած, սրտումս ողջունում եմ նրան...

Ցանկարծ, այդ տարտամ խաւարի միջից, չգիտես՝ որտեղից եկած մի հեռաւոր երաժշտութիւն անցաւ մեր փոքր բանակատեղի վրայով։ Նրա տկար, բայց յստակ ձայները հմայիչ հնչեղով մեղեղիական մրմունջ էին սփռում անմանական գիշերի միջից։

Լսում էի այնպէս յափշտակւած, կարծես մի զմայլիչ երազի խաղալիք դարձած լինէր։

— Քիւրդերն են, ասաց մեր ընկերներից մէկը։

Իրօք քըդական երաժշտութիւն էր, և ես վերյշեցի այդ ծանը և անուշ եղանակը, որ սկսում է մի քանի բարձր խագերով և յետոյ ներդաշնակ իջնում, դառնում է ծանը ու մելամաղձիկ։ Լսում էի երկար, անսահման գիւթանքով՝ տարածութեան միջից թռչող այդ գիշերային երգը։

Ուեն մարդու տրւած չէ հասկանալ այդ հնչենների ամբողջ տիրութիւնը, այդ խազերի դառնութիւնը։ Երաժշտական այդ բանաստեղծութիւնները, նրա ինքնատիպ ձևափոխութիւնները, որոնք չկան ուրիշ որևէ երաժշտութեան

մէջ, այդ զուտ արևելեան մեղեղին մատչելի չէ հիւսիսի կամ արևմուտքի մարդուն. միայն մենք ենք որ հասկանում ենք այդ. նա մեզ թնվշանքի, թախիծի ըոպէներ է ապրեցնում, նա բաց է անում մեր բոլոր վէրքերը, որոնք չկարողացն բուժել արտասահմանի ոչ մի կեանքով, արդի ոչ մի երաժշտութեամբ։ Օ՞հ, որ հայրենակցի սիրոը չէ յուզւել՝ լսելով այդ շեշտերը, որոնք ձեզ ընկղմում են կախարդական երազանքի, խոհուն ու տանջալից թախիծի մէջ։ Ամեն ինչ, մեր ծննդավայրը, մեր կեանքը, մեր սէրը, ինչ որ թանգ է մեր սրտին—ամեն ինչ վերարտադրում է այդ երաժշտութեան մէջ, որովհետեւ ծնւել ենք այդ երաժշտութիւնն ունենալով մեր արեան մէջ, և կը մեռնենք նրա հետ։

Եւ ես մտածում էի այն ամենի մասին, ինչ կարողացել է անել մոլեռանդութիւնը. նա մի ժողովուրդի հանել է միւսի դէմ, թելադրել է սպանութիւններ, պատճառ է եղած այնքան դժբախտութիւնների, որովհետեւ մէկը քրիստոնեայ է, իսկ միւսը մահմեղական։ Եւ սակայն, ինչքան նման գծեր կան քիւրդի և հայի միջեւ, թէ բարքերի, թէ իրենց նահապետական կեանքի, հպարտ նկարագրի, և վերջապէս այս երաժշտութեան մէջ, որ սիացնում է երկու հոգիները, մէկը մահմեղական, միւսը քրիստոնեայ,—

միւնոյն յափշտակութեամբ, միւնոյն դիւթանքով, միւնոյն երազանքով։

Եւ հնչիւնները գալիս էին շարունակ աւելի յստակ՝ այդ խաւարում իրենց հետը տանելով անզօրութեան մի հառաջանք...



Հրամանատարը նախազգուշացրեց, որ ճիշտ
կէս գիշերին ճամբայ ենք ընկնելու: Ամենքը
շտապեցին պառկել և այժմ նիրհում են
խոր քնով:

Անձրեսում է: Դուրսը զգւելի եղանակ է, և
անձրես չէ դադարում: Զրի կտրատւած վարա-
գոյրի միջից դեռ ընդնշմարում է լեռների
քղանցքը, մինչ կատարները կորած են անորոշ
զանգւածների մէջ: Ամբողջ երկիրը տնքում է
փոթորկի տակ, որ գալիս է ամեն կողմից, ա-
լեկոծւում, ոռնում, կատաղում գերազոյն գըր-
գուումով: Հոդն ամբողջովին թրջւած է, և ցեխի
մէջ ես խրւում:

Մեր բանակատեղի վրայ ևս իջաւ խաւար
գիշերը: Հանգստի այդ մի քանի ժամերի ըն-
թացքում՝ շատ անդամ պէտք է վեր կենալ ձիե-
րին նայելու, որոնք իրար վրայ են յարձակ-
ւում, փախչում են իրենց բխովները հանելով:
Եւ, դեռ նոր քնած, վեր կենալու ժամանակն
է արդէն:

Իւրաքանչիւրս երեք հարիւրական փամ-
փուշտ ենք ստանում՝ այն յանձնարարութեամբ,
որ խնայենք նրանց: Մեր խումբը կարգով շար-
ւեց՝ մեկնելու պատրաստ: Լոռւթեան մէջ լսւեց
պետի ձայնը, որ հրամաններ է արձակում: Հե-
ծելազօքը ճամբայ է ընկնում՝ ճախ թեր բռնե-
ծելազօքը ճամբայ է ընկնում՝ ճախ թեր:

Կ Ռ Ի Ւ Ը

Չմուան մի ցուրտ, անհաճոյ օր է: Ի՞նչպէս
անհանգիստ է մեր հիւղակում: Մի թոյլ կրակ
է վառւում թոնիրի մէջ: Սառոյցի պէս ցուրտ
քամին համնում է մեզ ամեն կողմից՝ անցնելով
ճեղքերից և տարածելով մի տարաստ տիրութիւն:

Դուրսը տենդային պատրաստութիւններ են
տեսնում: Թնդանօթաձիգները մանրակրկիտ խը-
նամբով փայլեցնում են թնդանօթները, որոնց
երախներին նայելիս մտածում են նրանց արձա-
կելիք ոռմբերի մասին: Դրանց մօտ են՝ այդ
հսկաների բաղդատմամբ խիստ մանր՝ գնդացիր-
ները. բայց ինչքան գործնական ու օգտակար
են նրանք այս երկրում, ուր ճանապարհների
բացակայութեան պատճառով գործողութիւնները
շատ հեռու են հեշտ լինելուց, և ներկայ պա-
տերազմի տեխնիքական ոյժերը գրեթէ ճեղքերի
վրայ պէտք է տեղափոխւեն:

Այդ ամբողջ աշխատանքն ամենամօա ժա-
մանակի համար է: Այս գիշեր պէտք է մեկնենք,
յարձակում սկսենք թիւքքերի գէմ՝ նրանց վա-
նելու համար այն լեռնանցքից, որ մեր առաջ
փակում է Տիգրանակերտի ճանապարհ:

լու համար, մինչև որ մեր հետեւակազօրքը, որ
մօտ 450 սւխնից է բաղկացած, համնի լեռնանց-
քի ստորոտը. վերելքը պէտք է կատարւի միասին:

Չնայած թշնամու թւին, որի մասին տե-
ղեկացանք մի հետախուզութեան ժամանակ
բռնւած թիւրք գերիներից, թէ նա մեզնից չորս
անգամ աւելի է, հրաման ենք ստացել ամեն
գնով գրաւել լեռնանցքն ու պահել նրան, մինչև
որ օդնական ոյժեր հասնեն: Բացի մեր խմբից,
արշաւանքին մասնակցելու են՝ մի վաշտ Ն. Կ.
Բ.-ից և մի վաշտ Էլ Ա.-ի գնդից. ուստական
ոյժերը պէտք է գանւէին մեր աջ թևի վրայ:

Մի տասնեակ սասունցիներ, որոնք իրենց
հինգ մատների պէս էին ճանաչում այդ վայրը,
մեզ պիտի առաջնորդէին և ցոյց տային մի
ճամբայ, որ մեզ հնարաւորութիւն տար ձեռ-
նարկելու մի շրջապատող շարժում: Ութը տար-
բեր ճանապարհներ էին տանում դէպի լեռ-
նանցքի գագաթը. մի քանիսը երկար, դժւարե-
լանելի, միւսներն աւելի կարճ ու աւելի դիւրա-
մատչելի: Մեր խմբին պաշտօն յանձնւեց գնալ
և պահել ծայրայեղ աջ թևը: Պէտք էր անցնել
դէպի գագաթն առաջնորդող ամենակարճ արա-
հետով և մթնշաղին յանկարծ յարձակւել թշնա-
մու վրայ:

Ուստի սկսեցինք քայլել և հասնելով լեռան
ստորոտը, մի քիչ սպասեցինք, որ հետեւակազօրքը

համնի: Երբ ամենքը միացան, վերստին ճամբայ
ընկանք՝ կրկնապատկելով մեր զգուշաւորութիւնը:
Թշնամին մօտ էր և ոչ մի կասկած չպէտք է
յարուցանէր նրա մէջ. ամբողջ հարցը կայանում
էր նրանում, որ պահուկներն ու առաջապահներն
ողջ ողջ բռնւեն՝ այնպէս, որ ժամանակ չունե-
նան մի հատիկ գնդակ արձակելու: Այդ պէտք է
անւէր արագ, առանց ժամանակ կորցնելու և
գործադրւէր մեծ արիութեամբ ու պաղարիւն,
որովհետև ամենափոքր մի անխոհեմութիւն
կարող էր անաջնորդութեան մասնել ամբողջ ծրա-
գիրն ու աղէտալի հետեւանքներ ունենալ մեզ
համար: Զիերի սանձից բնանձ՝ գաղտագողի
առաջանում էինք ցեխով խառնւած ձիւնի մի-
ջով: Թւում էր, թէ նոյնիսկ կենդանիները զգում
էին վտանգը և հանդարտ էին գնում:

Չնայած տարւայ այդ եղանակին—ապրիլի
վերջն էր—ձիւնի մի թանձր խաւ ծածկել էր
գրեթէ ամբողջ լեռնանցքն ու նրա լանջը՝ մի
կողմից հանգնելով մեր քայլերի աղմուկը, միւս
կողմից մեծապէս աւելացնելով մեր վերելքի
դժւարութիւնը:

Քայլում ենք կուրօրէն, իրար անձրեանո-
ցից բռնած, որպէսզի չկորսւենք: Ամեն քայլա-
փոխին հանդիպում ենք մի խոշնդոտի, և սառ-
նաշունչ քամին, Սամնոյ լեռների այդ յափառ-

նական ընկերը, ծակում է մեր աչքերն ու խո-
յում մեր կաշին իր սառառութեամբ:

Դա մութ գիշեր չէր, այլ ու գիշեր.
խաւարը պատի պէս թանձր ու խիտ է, և
թւում է, թէ կարելի է շօշափել նրան: Այս
ապաւորութեան տակ ենք, որ եթէ մի քայլ ա-
նենք, չենք կաշող էլ առաջ գնալ, թէ ճամ-
բայ չկայ, թէ պէտք է կանդ առնել, առջելց
հեռացնել այդ ու զանգւածը, որ բռնում է
անցքը:

Ուրւականների նման համբ քայլելով՝ կանջ
ենք դնում Եփրատի խուլ մրմունջներին, որ իր
Ջերը քարզ է տալիս այստեղ, շատ հեռու, դէ-
պի Միջագետքի խորքերը, ուր հեծեծում են
մեր աքսորական եղբայրները. և ուր հաւաքւել
են մահւան կարաւանների մնացորդները: Գիշե-
րային այդ վերելքն ունէր մի ինչ որ մղձաւան-
ջային, տիրառիթ բան. առաջանալով այդ ոչնչի
միջից, թւում էր, թէ թափանցում ենք մէկն
այն հաղար ոլորւածք ունեցող լաբիւրինթունե-
րեց, նման դիցաբանական կրետէի բաւիղին,
մէկն այն լուռ շիրիմներից, որտեղից ոչ ողջ
դուրս չի գալիս:

Եւ սակայն, երբ բազմապիսի դժւարու-
թիւններից յետոյ հասանք լեռնանցքի գլուխը,
այդի առաջին ցոլքերն երևացին: Դանակով
կորելու աստիճան հոծ մշուշ էր պատել, այն-

քան որ խիտ էր: Մեր ձիերին մի հեղեղառւս
պահելուց յետոյ, առաջ շարժւեցինք: Մեր ա-
ռաջապահները, որոնք բաղկացած էին հաւըն-
դիր հետախոյզներից, առաջացան դէպի թիւր-
քական պահակները: Ամենածագրաժամային ըս-
պէն էր, ամենից աւելի անձկալին: Արդեօք
պիտի հասնե՞ն իրենց նպատակին՝ ա-
ռանց նկատւելու: Գուցէ թշնամին նտիւրդու-
շացւած է... այդ դէպքում նրանք ամենքն էլ
գերի կընկնեն:

Մեր սրտերը սեղմւած են անհամբեր սպա-
սումից. այսուամենայնիւ կատարեալ վստ-
հութիւն ունինք մեր ընկերների վրայ: Մեր
կամաւորներն այսպիսի կտրիմներ են, որոնք
երբէք ողջ չեն յանձնւիլ:

Արել ծագել էր: Յանկարծ մի ճարճատիւն
լուեց՝ պատռելով օդի լուռութիւնը, և մի բնորոշ
սուլոց մեզ իմացըրեց առաջին վրիպած փամ-
փուշտները, որոնք անցան մեր գլխի վերեկց:
Հազիւ ժամը հինգն էր:

Կոխւը սկսեց: Մեր հետախոյզները, որոնք
առաջին գծի վրայ էին, ողջ ողջ գերեցին թիւրք
պահակներին. յետոյ շարունակելով իրենց ա-
ռաջիւսաղութիւնը՝ գրաւեցին զարիվայրի լանջե-
րը, և կանգ առան՝ թիւրքերին իրենց դիրքերեց
վանելուց և մեր առջելը գտնւող բլութը գրաւ-
լուց յետոյ միայն:

Հազիւ կէս ժամ էր, որ սկսւել էր հրածգութիւնը, և ամբողջ գագաթն արդէն մեր ձեռքն անցաւ, և դա շնորհիւ մեր կամաւորների, որոնք կուի տեսդին միացրել էին գործողութեան արտասովոր ճարպիկութիւն։ Կուի մի ուրիշ միաւորի համար մի ամբողջ գունդ հարկաւոր կը լինէր զրաւելու այդ արծային բարձունքը, որ բնութիւնը դարձրել էր մի իսկական բերդ։ և սակայն, մեր յիսուն զինւորներին աջողւեց գերել թւով տամնապատիկ թշնամուն՝ այն պատճառով, որ դրանցից իւրաքանչիւրն երկար փորձառութիւն ունէր, գիտէր պատերազմի բոլոր խօրամանկութիւնները, և կուի էր եկել ոչ թէ հարկադրւած, այլ իր սեփական կամքով։

Բայց հանդիպակաց կողմից, մոտ 900 մետրի վրայ հազիւ նկատելի փոքրիկ գորշ կէտեր էին շարժւում։ Հրածգութեան շառաչիւնն աւելի ուժգին էր լսում, և այնտեղ մերթ ընդ մերթ մի փոքր կէտ անհետանում էր։

Սակայն մի ըսպէում գէպքերը գսհավէժ ընթացք ստացան։ Թիւրքական զանգւածները դալիս էին մեր աջ թերի վրայ, նրանց օգնական ոյժեր էին հասնում։ Նշանակէտեր չէին պակասում, և մերոնք լաւ գործ էին տեսնում։

Մենք տակաւին պահեստումն ենք։ Մեզնից մի քանի քայլի վրայ կանգնած է մեր հրամանատարը։ Միջահասակ, թեկնեղ, խրոխտ գլխով

և աչքերով, որ մանկական գեղեցկութիւն ունին։ Պարզ հագած, ինչպէս իր կամաւորները, «տասնոցը» կախ մէջքից, հեռազիտակով զննում է տարածութիւնը։ Ժիր ու շրջահայեաց՝ նա պատրաստում է իր ծըագիբը։ Մի ակնարկով ընդգրկեց և հասկացաւ ամբողջ դրութիւնը։ Այժմ նրա թիկնապահը հրաման է բերում, մի ուրիշ ձիաւոր զինւոր գնում է մի լուր հազոր-գելու ոռուսական վաշտերին, որոնք գտնվում են մեր ծայրայեղ աջ թեռում։ Ճակատամարտը նոր է սկսելու. պէտք է գործել առանց յապագելու։

Հրամանատարի ճիշտ կողքին գանւում են մի յիսնեակ թիւրք գերիներ, որոնց հսկում են մի քանի զինւորներ՝ զէնքը ձեռին։ Նրանք ամենքն ապուշ տեսք ունին, յիմարացած, որ այգպէս զինաթափւած են, բռնւած՝ դեռ մի հատիկ զնդակած, նոյնիսկ բերան բանալու ժագնակ չունեցած։ Նրանք ամենքն էլ լաւ են հագլած, նոր զգեստներով ու կօշիկներով։ Բաճ կոնների օճիքի վրայ զանազանում է «կ» տառը—Գալլիպոլի թերակղուց նոր հասած զօրքերից են։ Նրանց միջն կայ և մի երիտասարդ թիւրք սպայ, որ անսխալ գերմաններէն է խօսիւրք սպայ, որ անսխալ գերմաններէն է խօսում, մի պատանի, հազիւ 20 տարեկան։ Նա իւրայիններից մի կողմ է կանգնած, որպէսզի լաւ աչքի լնկնի իր աստիճանի բարձրութիւնը ասկեարների բաղդատմամբ։

Պահեստը թող առաջ անցնի, գոչեց հրա-
մանատարը:

Հերթը մերն էր: Խսկոյն ոտքի կանգնելով
առաջ նետւեցինք, ցատկելով, կատաղի աշ-
քերով, ամեն ինչ մոռանալով մեր շուրջը, տար-
ւելով մի գաղտփարով, միակ նպատակով—հաս-
նել թշնամու վրայ, նրան ցցել սւխնչ ծայրին,
վրէժ լուծելու համար, արիւնի վրէժը՝ նրանց
գործած ըոլոր վայրագութիւնների հումար, բո-
լոր այն անարդանքների համար, որոնց ենթար-
կել են մեզ տարիներ ու տարիներ շարունակ:
Մենք այժմ միայն 150 քայլ հեռաւորութեան
վրայ էինք գտնում թիւրքերից: Նրանք սոսկա-
լի կրակ բացին մեզ վրայ՝ խոռոչներ առաջց-
նելով մեր շարքերում: Իսկ կորստարաբեր էր,
ամեն ըոպէ մի ընկեր էր ընկնում մահացու վի-
րաւորւած և կոկորդից արձակելով մի ցաւատանջ
ճիչ: Տեսնելով, որ իրենք մեզնից շատ աւե-
լի են, թիւրքերը գիմեցին յարձակման: Անկա-
րելի էր առաջանալ. ամեն մի քայլ մի կամաւո-
րի կիանք էր արժենում. ուստի գետնի վրայ
պառկեցինք՝ սպասելով թշնամու գըոհին:

Մեր գրութիւնն աւելի ու աւելի էր վտան-
գաւոր դառնում: Այժմ մեզ վրայ կրակում էին և
կողքերից, այնպէս որ երեք տարբեր կողմերից
գնդակների տարափ էր տեղում մեր վրայ:

Այդ ըոպէին բերում են մեր երկրորդ գու-
մարտակի հրամանատար Մարտիրոսին, որ ծանր
վիրաւորւած է ոտքից. երկու զինուրներ նրան
պահում են. նա չէ կարողանում քայլել: Առատ
արիւն կորցրած լինելով՝ չէ կարող տեղափոխ-
ւել աւելի հեռու, կառւմ ենք, որ նրա օգնական
Մակեդոնն էլ վիրաւորւած է գլխից, բայց մա-
ցել է իր դիրքում և ստանձնել հրամանատա-
րութիւնը: Նրանց թիկնապահ Վիրապին նեն-
գորէն սպանել են 5 մետր տարածութիւնից՝
փշելով նրա գանգը: Պարզւեց, որ թիւրքերը
բարձրացրել են իրենց ձեռքերը՝ «թէսլիմ, թէս-
լիմ» կամչելով, և երբ մերոնք մօտեցել են
առանց կասկածելու, ուղղել են հրացաններն ու
մօտիկից կրակել: Վիրապը սպանւել է անմի-
ջապէս՝ գլուխը ցրիւ եկած: Մերոնցից ուրիշ
երկու հոգի ծանր կերպով վիրաւորւել են: Ո՞չ
մի գերի չվերցւեց այդ նամարդ կուղներից.
ամենքն էլ տեղապահեղը սպանւեցին՝ անողորմ և
մոլեգին դարձած մեր զինուրների ձեռքով:

Այդ ըոպէին մի թիւթէ քամի էր բարձրա-
ցել, և թիւրքերն անցան հակայարձակման: Դրու-
թիւնը ծանրակշիռ էր դառնում: Նրանք երկում
էին ամենուրեք, գալիս էին ամեն կողմից:
Զարդում էին մասսաներով և գալիս էին շա-
բանակ:

Շրջապատւած էինք, և մեր տեղն իսկական դժոխք էր դարձել:

Թիւրքերը դուրս գալով իրենց խրամատից՝ աղաղակներով ու սպառնալից շարժումներով առաջ էին նետում. նախ մի զօրասիւն, ապա երկրորդը և վերջապէս երրորդը վրայ հասան։ Մէնք, բայց վիրաւորներից, որոնց պէտք է տեղափոխէին ընկերները, և սպանւածներից, հիմա մացել էինք մօտ երեսուն հոգի։ Նրանց ալիքների հեղեղի, որ գալիս էր՝ կարծես մեզ ժայռի պէս փշելու համար, և դժոխային ու անընդհատ կրակի առաջ, անտարակոյս, եղաւ մի բռպէ, որի արագութիւնը ես լաւ չպատկերացրի, աւելի շուտ՝ մի վայրկեան, երբ անստուգութիւնը համարեա սկսել էր նահանջի մի շարժում առաջացնել. բայց դա միայն մի վայրկեան էր, եկաւ մի ուրիշ վայրկեան, երբ մեր կամաւորների պաղարիւնութիւնը, երիտասարդութիւնը, հերոսութիւնը, աւանդութիւնները, թիւրքերի դէմ ատելութիւնը, յաղթանակ տանելու և վրէժ լուծելու յոյսը զարթեցրին թափ ու արիսւթիւն։ Հայ կամաւորները թւով ճպմւած էին, Գիտէին, որ ամենքն էլ մահւան են դատապարտւած, եթէ չփախչէին։ Թիւրքերն այժմ միայն մի քանի քայլի վրայ են։

Բայց կարմղ էին փախչել, տեսնւած բան է, որ կամաւորը փախուստ տայ—ոչ երբէք։

Պատերազմի սկզբից ի վեր ոչ մի այդպիսի դէպք արձանագրւած չէ հայ կամաւորների տարեգրութեան մէջ։ Նրանք կը մեռնեն, քանի որ պէտք է մեռնել, բայց կը մեռնեն՝ զէնքը ձեռին։—Այս էր կամաւորին վայել միակ լուծումը։

Եւ տեղի ունեցաւ մի ապշեցուցիչ աեսարան։ Արհամարհելով գնդակները, որոնք սուլելով ընկնում էին նրանց մօտ, հողի մէջ, կամաւորները խոյացան դէպի առաջ՝ ամեն ինչ հընձելով իրենց ճանապարհի վրայ։ Այս տոկութեան, ամեննեին չղիջելու այդ վճռականութեան, այդ հոյակապ անձնուրացութեան հանդէպ, թիւրքերին տիրեց վարանումի մի բռպէ, որ բաւական էր յաղթութիւնը վճռելու համար։ Եւ մի բուռն կամաւորներին աջողւեց կասեցնել այդ մասսան, առաջն առել մարդկային այդ յորձանքի յարձակման ու կատարելապէս անկարգ փախուստի մատնել շւարած թշնամուն։

Օ՛հ, ինչքան գեղեցիկ էին մեր կամաւորներն այդ կուռում, այդ բռպէում... Հայրենիքը կը հպարտանար տեսնելով նրանց այդքան ռազմիկ, այդքան քաջ լինելը։ Նրանց արիութեան շնորհիւ դերերը փոխւեցին։ Այժմ թիւրքերն էին փախչում խօրական խուճապով, և մեր կամաւորները հրազդնները լեցնելով անխնայ ջարգում էին նրանց։

ցուցիչ ճայթիւնով, պարզւում է, որ թիւրքերը գործ են ածում «դում-դում» կոչւած պայթուցիկ փամփուշտներ:

Մի քանի ժամանակից ի վեր ամբողջ երկինքը ծածկւած է ամպերով։ Ամենից առաջ անձրիկ մի թեթև խաւ է, յետոյ աւելի խիստ և ուժգին է դառնում, որին հետեւում է մի ըռպէ հանգիստ։ Բայց յանկարծ պայթում են կայծակները, որոտումները սաստկանում, յետոյ մի կատաղի փոթորիկ, դոյզն ընդմիջումներով, բարձրացնում է և տանում ջրի մի մեծ կոհակ։ Հիմա անձրել հեղեղանման է թափւում։ մի տեղատարափ, անդադրում, կուրացնող, ամեն ինչ ողողող, մի սոսկալի և խիտ անձրել, այնպէս որ երկու քայլի վրայ ոչինչ չես կարող տեսնել։ Մութը կրկնապատկւում է։ ամպերը գալիս են հետզհետէ աւել սպառնալից՝ քշելով մի զարհուրելի քամիից։ կայծակները մի սրբնթաց հետք է գծում — կասես՝ ամբողջ աշխարհի ամպերը հաւաքւած լինին Զեշմէ — Գէզմա — Գեադուկի վրայ։

Անձրեւում է, անձրեւում, կարծես գիշեր լինի, օյնքան թանձը է գալիս։ Հիմա քամին է սկսում փչել։ նրա գոռգոռոցը լսւում է խորխորատներում։

Ամենքս էլ թրջւած ենք մինչև ոսկորները։ Պատսպարւած քարերի ետեր, հապճեպով փոր-

— Առ, էս էլ էն եքայ մարդուն, որ փախչում է դէպի ձախ, գոռաց Տիգրանիը, և հրացանն ուղղելով՝ արձակեց։ կարելի էր որոշակի տեսնել, որ ասկեարի մեծ ուրւագիծը տապալւեց։

Գլուխը մերկ, կուրծքը կիսովին բաց՝ Տիգրանն աչքի էր ընկնում խմբի մէջ։ Նա ոգեպնդում էր ընկերներին, և ինքն առաջինը խոյացաւ թշնամուն հալածելու։ Նրան տրւած էր մարդկանց իր յետեկից քաշելու շնորհքը։

Սկսւեց մի ընդհանուր հոսանք դէպի առաջ։ Մեր աջ թեփի վրայ գտնուում էին Դէլի-Ղազարի զինւորները, ձախ թեփի վրայ Մարտիրոսի զինւորները։ Բարձրանալով մի բլրի վրայ՝ կանգ առանք. պէտք էր ամբանալ զրաււած հողամասերում՝ նախքան աւելի հեռուն զնալու ոիսկ անելը։ Բայց դա միայն ըոպէական դադար էր, որովհետեւ շուտով հրաձգութիւնը վերսկսւեց։

Ժամը ինն է։ Հասնում է եապոնը՝ իր սոս կալի դէմքով և իր փոքր հասակի համեմատութեամբ ահագին դաշոյնով և իմացնում է մեզ, որ մեր գործերը շատ վատ չեն, բայց ամեն գնով պէտք է գրաւել մի խրամատ, որտեղից թիւրքերը կրակում են մեզ օգնութեան փութացող բոլոր պահեստների վրայ։ Բայց այդ իսկ ըոպէին շրջապատւեցինք գնդացիրների և հրացանների ծայրաստիճան անվրէպ կրակով։ Գընդակները պայթում են մեր գլխի վերև վհատե-

ւած փոներում, ջուրը հասնում է մինչև մեր
մէջքը: Անկարելի է շարժել, ոչ էլ տեղափոխ
ւել կարելի է, որովհետև թիւրքերը շարունա-
կում են կրակել: Զգեստներս մարմին կպած,
վրաներից ջուր հոսելով, սարսռալով և սովա-
մահ մոռմ ենք անշարժ, շարունակելով կասեց-
նել թիւրքերի զրոհը:

Իսկ վոթորիկը չէ դադարում: Պէտք է տե-
սած լինել այդ ջրհեղեղեան անձրևները, որոնք
ժամեր ու ժամեր շարունակ բաղխւում են
Սուսնոյ լիռներին:

Կէսօրւայ ժամը երկումն է: Գնդացիքները
սկսում են կատաղօրէն շառաչել: Մեր կամա-
ւորները մի խրամատ գրաւեցին մեր աջ թեփ
վրայ. Բայց թշնամու մի զօրասիւն է երեսում
յանկարծ մեր հանդէպ: Համազարկ ենք բանում,
և թիւրքերը հսձւելով՝ լնկնում են իրար ետեից,
ոմանք սպանւած, ոմանք վիրաւորւած:

Կոիւը շարունակումն է: Ժամը չորսն է:
Թշնամին մի քանի ժամանակից ի վեր սկսել է
տյնպիսի կրակ, որ գլխի պտոյտ է պատճառում,
զոռանցել է տալիս և ուղեղները սասանեցնում
այդ անվերջ վզգիւնով: Այդ միջոցին նա արձա-
կեց մի ալիք, որ յետ մղեցինք. Նրա թիւլուն-
քից համում է երկրորդը, աւելի ուժեղ, աւելի
հոծ. այսուամենայնիւ այդ զրոհն էլ կասեցւեց,
յետոյ յետ շպրտւեց: Բայց և մեր խումբն էլ

նօսրանում էր սպանւածներով ու վիրաւոր-
ներով և մենք աւելի ես մեկուսացանք:

Մեր ճակատի և ձախ թեփ վրայ յարձակ-
աելով՝ թիւրքերը տեղացնում են մի աւելի սոս-
կալի, քան երբէք. գնդացիքային կրակ, աւլում
են ամբողջ հողը և գրաւում ն. Կ. Բ.-ի խրա-
մատների առաջին զիծը, որ գտնւում է մեր
բանակատեղի և լեռնաշղթայի բոլոր գագաթնե-
րին իշխող մի բարձունքի վրայ: Այդ բովէին՝
Յակոբը, որ ղեկավարում էր մեր տասնեակը,
և ես, ապշահար նկատեցինք, որ մօտ 500 մետ-
րի վրայ թիւրքերի մի զանգւած է առաջանում:

Որպէսզի չշփոթւեն ու չփառաւեն, մենք
զինւորներին վստահացըինք, որ զրանք մեր օդ-
նական ոյժերն են, որ գալիս են: Բայց երբ
նրանք տեսան ն. Կ. Բ. ուուս զինւորներին,
սրոնք յետ էին քաշւում, չկարողացանք դրանցից
թագցնել ճշմարտութիւնը: Մեր ձախ թեփ ճեղք-
ւած էր, և թիւրքերը գալիս էին մեծ թւով:

Յակոբը հաւաքեց իր բոլոր զինւորներին և
ասաց նրանց.

— Տղէրքս, եթէ թողնենք մեր գիրքը,
ուուսական ամբողջ ն. Կ. Բ. վաշտը գերի կ'ընկ-
նի: Պէտք է զիմադրենք մինչև վերջին մար-
դը, մինչև վերջին գնդակը: Թիւրքերը պէտք է
իմանան, թէ կուում են հայ կամաւորների դէմ:

Եւ կոիւը վերսկսւեց աւելի կատաղի կեր-

Պօզ: Գնդակները սուլում էին, և այն տպաւորութիւնն էինք ստանում, թէ մեղուների մի մի պար է, որ թոշում է:

Հիմա դրսութիւնն իսկապէս լըջանում էր: Թշնամին դարձեալ դուրս էր եկել իր խրամտաներից, Գրոհը չափազանց ուժգին է: Թշնամին ուզում է համնել մեր գտնւած վայրը, ինչ գնով էլ լինի: Բայց այս բարձր տեղն ամեն ինչ է մեղ համար. եթէ գրաւեի, այլիս ճամբայ չի թայ մեր նահանջի համար. այստեղով պէտք է անցնեն մի ամբողջ վաշտ, բոլոր վիրաւորները, չիերը, զնդացիքները, զինւորները, այդ ամբողջ թափորը պէտք է անցնի այս լեռան վրայով:

Եւ հրաձգութիւնը շարունակւում է հետզհետէ աւելի ուժգին թափով: Փամփուշտները պայթում են շատ մօտ: Թիւրքերը վրայ են համնում ամեն տեղից: Արդեօք տեղի ենք տալու: Միւս զօրամասերը քաշւեցին. միայն մեր խումբն է մասնակցում կուին: Մենակ ենք մնացել: Այդ ճշգնաժամային ըռպէին համնում է մեր հրամանառարը: Աչքերը կայծկլուն, ակնարկն ազգու և վնական՝ նա յանկարծ երևաց ձիու վրայ, փամփուշտների տարափի միջից:

Նրա ձին չորս տարեկան է, ամբողջովին հրաշալի սսկեգոյն, կրծքի վրայ միակ սև բծով: Մազերը փայլուն, միջահասակ, նա անբաղդատելիօրէն ճկուն, հուժկու և կրակու է: Սովո-

րական ժամանակ գառնուկի պէս խելօք և մաքդարարածի նման ուշիմ է, բայց երբ գըգուում է, համարեա անզուսպ խելագար է դառնում:

Հրամանատարն եկել էր այստեղ՝ արհամարհելով վտանգը, անցնելով բաց վայրից, ուր ամեն վայրկեան մահը կարող էր հարւածել նրան, և իր ներկայութեամբ հանգստացնում էր զինւորներին, յանձնարարում էր, որ ամեն մարդ իր տեղումը մնայ:

Երբ զինւորները կուի մէջտեղը տեսան իրենց պետին, որ քաջութեամբ մրցում է իրենց հետ, արհամարհում է զնդակները, որոնք պայթում են չորս բոլորը, ոգեսրւեցին, որովհետև լաղացում էին իրենց հրամանատարին, հիանում նրա անվախութեան վրայ:

Տղէրք, դուք աւելի շուտ պէտք է մեսնէք, քան թողնէք, որ մի հատիկ թիւրք անցնի: Լաւ պիտի զիմագրէք:

Բայց արդէն մի ձիաւոր զինւոր էր գալիք՝ պահանջելով նրա ներկայութիւնը մի այլ կէտում: Հրամանատարը դարձաւ դէպի մեղ, ձեւը մի ակնարկ, որ դէպի իր զինւորները վստահութեան մի փայլով էր շողում, խթանեց իր ձին և անհետացաւ նոյնքան յանկարծակի, ինչպէս եկել էր:

«Լաւ զիմագրեցէք», եղել էր հրամանատարի վերջին խօսքը, և մենք լաւ զիմագրեցինք».

կուռ, առանց մի շարժումի, սպասեցինք թիւրքերի վերելքին. Թողեցինք, որ մօտենան մինչև յիսուն քայլի վրայ: Եւ իսկոյն, դան-դան—համազարկ: Յարձակւողները խումբ խումբ ընկան. դիակներ կային նոյնիսկ մեզնից մի քանի քայլի վրայ:

— Դեռ շարունակում են բարձրանալ, ցած խփեցէք, գոչեց Յակոբը: Հիմա ցած ենք խփում: Այս թակարդը շարունակում էր ամբողջ ըռպակներ: Արդէն մի ժամ է, որ մեր կամաւորները պաշտպանում էին առիւծների նման՝ յետ մղելով ամեն մի գրոհ: Այժմ միայն մի բուռը մարդիկ ենք, իսկ թիւրքերն աւելի ու աւելի բազմութեամբ են գալիս: Շրջապատած ենք երեք կողմից: Մեր դրութիւնը ճգնաժամային է: Իւրաքանչիւրիս մնում էր միայն տասնական փամփուշտ:

Բայց ահա հրաման է ստացւում պարզել այդ վայրը: Ամենքն անցել են արդէն. մենք էլ մեր հերթին կարող ենք յետ քաշւել: Սակայն չպէտք է այն տպաւորութիւնը ստանայ թրշնամին, թէ մենք փախչում ենք. ուստի և նահանջում ենք բարձունքների վրայից՝ շարունակելով երածգութիւնը:

Ահա, թէ ինչպէս մի տասնեակ կամաւորներ ընդհանուրի փրկութեան համար անձնագոհ

լինելով, կարողացան կասեցնել հարիւրաւոր թիւրքերի գրոհը, Գէզմա—Գեադուկի վրայ սփռելով մոտ 200 թիւրք ասկեարների դիակ սփռելով մի լքւած վաշտի համար, որ կանոներ և այդ՝ մի լքւած վաշտի համար, որ կանոնաւոր նահանջէ և չկոտորւի:



ՀԱՅ ԿՆՈԶ ՍԻՐՏԸ

Մէկն էր այն սև գիշերներից, երբ դիւզացիները խաղաղ ժամանակ իսկ չէին դուրս գալ տնից։ Փոթորիկը պատել էր ամբողջ գաւառը, և ամենքը մեացին խրամատներում—թիւրքերը կծկւած իրենց խրամատում, և կամաւորները նրանց գէմ առ դէմ՝ սպասելով աւելի մեղմ ու նպաստաւոր եղանակի։ Միայն պահակն էր հսկում՝ պառյտ գործելով և խաւարի միջից գննելով թշնամու գիրքերը։

Ամեն ինչ հանդարտ էր թւում։ Ո՞վ կը կասկածէր, որ թշնամու վտանգի տակ, երկու քայլի վրայ մի արշաւանք է կատարելու, բայց ոչ սովորական արշաւանք, այլ իր տեսակում եղակի մի բան։

Դա Մ—ն է, որ իր ընկերներից մի քանիսի հետ միասին քիւրգերից վերագնում է հայերին։

Երբ ջարգերը սկսւեցին, քիւրդական մի քանի աշխեթներ ապաստան տւին հայերին։ Այժմ նրանք հայերին բերել են թիւրքական գիրերի թիկունքից և մերոնց հետ փոխադարձ

համաձայնութեան գալով՝ ամեն մի հայի փոխարէն մի ոոկի էին ստանում, իբր նրանց տպրուստի երկուստեք գնահատւած փոխարժէքը։

Այսօր նրանք լու գործ տեսան՝ օդուելով գիշերւայ թանձր խաւարից, և բաղմաթիւ տասնեակներով դժբախտ հայեր խլեցին այն դժման ճակատագրից, որ նրանց ձգել էր դահիճների ճանկերի մէջ։

Որևէ առաջին ճառագայթներն արդէն վանում էին մթութիւնը և երկնակամարը բոցավառում էր բաց կարմիր գոյն տուած՝ հեռուից նմանւելով մի համայնտարած հրդեհի, որ աղէտ է տեղում երկրի վրայ։ Հետեւալ օրւան յետաձգւեց մեր վտանգալից ու գողտնի արշաւանքը, երբ բերին մի հայուհու, մօտ երեսուն տարեկան, աղգային տարազով, երեսը հաստ լաշակով ծածկւած։ Նրա արևահար գոյնն ու խորշոմած դէմքը ցոյց էին տալիս նրա կրած բոլոր զրկանքներն իր երկարառու գերութեան ընթացքում, և նրա ստրստիմահար ու անձարացած տեսքը մտածել էին տալիս այն բոլոր ստորացումների մասին, որոնց նաև ենթարկել էր։

Մի խուսափուկ տկնորկ ձգելով իր շուրջը՝ նրա հայեացքը կանգ պատւ իր ազտարարի վրայ։ Նա մի բողէ պիշ պիշ նայեց նրան, յետոյ սոքի կանգնելով՝ ուղղակի գիմեց գէղի նա։

— Եղբայր, առաջնա, պաղատառում եմ չմերժել, ինչ որ պէտք է խնդրեմ։ Լսիր իմ խնդիրքն և երկնաւոր Ասաւածը կը վարձատրէ մի դժբախտ կին միսիթաքելուդ համար։

Մ.—Ն այդ կնօջ պնդումի և վճռական շեշտի առաջ զերջ ի վերջոյ ընդունեց առաջարկը։

— Այսաեղից մի օրւայ ճանապարհի վրայ, վրայ, — սկսեց նա, — գտնւում է իմ զիւզը. կուզէի, որ դու ինձ ընկերակցեն այսաեղ գնալու։

Թրջւած արահետով դժւարութեամբ առաջանում են երկու ուրւագծեր. նրանցից մէկը, աղամարդը, թեով նեցուկ է դարձել մի կնօջ, որ յոզնութիւնից ուժասպա՛ հազիւ է քարշ գալիս։

Շուտով երեացին բոլորսկին ամայացած մի զիւզի աւերակները, աները՝ սեացած կրակի ծիրից։

— Այսաեղ է, ասոց կինը։ — Կանդ առան մի անակի մասրոդների մօս, որի առաջ բազմաթիւ քարեր էին զլորւծ։ Մնրազրելով մի անկիւնում՝ կինը սկսեց փորել գետինը։ Մի քիչ անց, նա վայրենի աղաղակ որձակելով ձեռքսւմ յաղթականօրէն ճօնեց մի փոքր քսակ։

— Ահա, — ասաց նա, — Յօ սոկի է. զիտեմ, ոյ քիչ է, բայց դա է իմ ամրոզ հարստաւթիւնը։ Առ այս զրտմը և աղաղակ մերոնցից նրանց որսնք դեռ դերի են քիւզերի ձեռքում։

Մ. — Ն, — նա էր կնոջը ընկերակցողը — խիստ յուղւած այդ զոհաբերութիւնից՝ նախ ուզեց մերժել, համոզել խեղճ կնոջը, որ պահէ իր փոքրիկ հարստութիւնը, միակ աղբիւրը, որ նրան հնարաւորութիւն կը տար ապրել մի առժամանակ. բայց կինը չէր ուզում ոչինչ լսել։

— Դու ինձ աղատեցի՞ր, աղաղակեց նա և իմ պարտքն է օգնել ձեզ՝ աղատելու նրանց, որոնք դեռ օտար լծի տակ են գտնւում։

Եւ այդ թշւառ կինը, որ ականատես էր եղել կոտորածներին, երբ կորոն իր ամուսինը, զաւակները, օջախը, երջանկութիւնը, — այդ կինը, որ աշխարհում բացի մի քանի ոսկիներից ուրիշ ոչինչ չունէր այլ ես, — իր աղատագրման ըոպէին լսում էր միայն խղճի ձայնին, որը նրան թելացրում էր կատարել իր պարտքը։

Եւ նա կատարեց այդ՝ վեհանձն ժեստով. առանց մտահոգւելու իր կեանքի մասին, ուզեց երախտահատոյց լինել և այդ լուման տւեց մի հպարտութեամբ, որի տակ ծածկւած էր իր երկրին օգտակար լինելու և իր աղիղ հայրենիքի հանդէպ պարտքը կտարելու անհուն գոհունակութիւնը…



Հ Յ Ա Ճ Ե Շ Տ

Գիշերը բարձրացած քամին շարունակում էր փշել աւելի ուժգին և հետպհետէ սպառնալից էր դառնում։ Գորշ մարգարագոյն երեխնըը կերպարանափոխել էր մուգ կապոյափ, որի վրայ գանազանում էին մի քանի սկ ստեղներ ամպեր, որոնք թւում էր թէ ընկել էին շատ ծանր բեռան տակ։ Եւ այդ քառսի, որուածան մէջ, բոլոր աղմուկներն իրար էին խառնել՝ մթնոլորտում կազմելով մի ժխոր, որ խլացնում էր ամեն ինչ։ Քառու մի ոռնացող թանձր կրնակ անցնելով մեր բանակատեղի վրայից՝ մի տարտամ տրտմութիւն աարածեց իր թևերով։

Բայց շուտով քամին հանդարտուում է, աղմուկը դադարում և իբր ջնչանեղձ մի գազան գետնի վրայ է տարածւում հանդարտիկ, խօր քնի մէջ։ Շըջակայքում ամեն ինչ մեռնում է, մի գժնդակ լուութիւն տիրում՝ մերթ ընդ մերթ ընդհատւելով եփրատի հեռաւոր աղմուկով, որ իր առաւօտեան ջրերում լողացնում էր գիշապիշ թռչուններին, որոնք յետոյ շատ բարձր գէպի երկինքն էին թռչում իրենց սսսկումի

ճիշերն արձակելով։ Այս լոռութեան մէջ ամեն մարդ զգում է մի ինչ որ ճնշող բան, նախատեսում է ինչ որ չարագուշակ լուր, ամեն մարդ կուահում է, թէ այդ նենգամիտ լուութիւնը բերում է ամեն զւարթութիւն, ամեն ուշրախութիւն մեռցնող մի մելամաղձութիւն։

Ի՞նչ է պատահել։ Ի՞նչ անիծապարա շունչ է դա, որ յանկարծ ճեղքեց օդը, սուզի մէջ խորասուզեց մեր բանակը, թունաւորեց թափը, վառվառնութիւնը, տրամադրութիւնը, և առաջացրեց այս շշմեցուցիչ փոփոխութիւնը։ Միթէ մեր կամաւորների արիութիւնը յանկարծ թուլացաւ, միթէ նրանք այս չեն կարողանում տանել կուի, զրկանքների այս կեանքը. արդեօք իրենց անկարող են զգում թշնամու առաջ, և կամ արդեօք թուլամորթութիւնից ու վախից՝ վայր են դրել զէնքերը։

Ոչ, ոչ, սաստիկ սխալուում են։ Հայ կամաւորն երբէք կանգ չէ առել այդպիսի արգելքների առաջ, նա երբէք չէ փախել թշնամու առջնից, զրկանքները չեն կարողացել ազդել նրա վրայ։ Սամնոյ սարերն ու եփրատի ափերը կարող են վկայել այդ մասին։ Մեր զինորները հաւասարմութեամբ են գնացել նւիրական աւանդութիւններով գծւած քաջութեան ուղիով։

Ոչ։ Կայ ուրիշ բան, մի բոլորովին այլ հարց, որ ծիծաղը մեռցը նրանց շրթունքների վրայ.

այդ պատճառը շատ ծանրակիու է, շատ նւաստացուցիչ կամաւորի ինքնասիրութեան համար—

«Մեր խումբը պիտի լուծվի»:

Այս, հրաման եկաւ ցրելու հայկական բոլոր խմբերը։ Երկու տարւայ զինւորական ծառայութիւնից յետոյ, որի ընթացքում նրանք անդադար կռւել են փառքով, արիւն թափելով արւած բոլոր ուխտերի, ընդհանուր դատի համար, հայ կամաւորներին արձակելու լուրն է ստացւում՝ ի նշան խորին երախտազիտութեան...

* *

Երբ Թիւքիան հաւաքելով իր բոլոր վայրենի հորդաները՝ յարձակւեց Հայաստանի վրայ և, ինչպէս անցեալներում, ուզեց հրի և արեան մատնել երկիրը, նա իր առաջ տեսաւ վըճական, հերոսական, ոչ մի զոհաբերութեան առջև շընկրկող մի ժողովուրդ։ Նա պիտի կըռւէր մի ազգի դէմ, որ իր ծաղիկ երիտասարդութիւնը զոհեց։ Նա սարսափի տղջութեամբ տեսաւ, որ իր բաղմաթիւ լեզէոնները ջախջախւում են հազարաւոր կըծքերի կենդանի, անանցանելի պատւարի դէմ։ Հայաստանը ոտքի էր կանգնել և ամենահետաւոր պատմութիւնից վե-

րակոչել իր ամբողջ ոյժը և ներարկել այն կտամաւորներին, որոնց յանձնել էր իր պաշտպանութիւնը։

Եւ հիմա այդ զաւակները, այդ հերոսներն այստեղ են, կարգով շարւած, լուռ, ձիւնից ու քամուց այրւած դէմքիերով, ուժեղ ու ճկուն բւրւագծով, զէնքը ձեռքներին։ Նրանք գեղեցիկ են իրենց ցնցոտիններում, որովհետև կըում են քաջութեան, մարտիկի եռանդի բոլոր հետքերը, և այժմ հանգիստ սպասում են իրենց պետի դալստեան։

Յանկարծ մի շշուկ անցաւ շարքերի միջից, զինւորից զինւոր—«հրամանատարը, հրամանատարը»։

Բացարձակ լոռւթիւն տիրեց։ Երեխաների նման յուզւած այս կտրիճ ուզմիկների միայն սրտի բարախումն էր լսելի լինում, երբ մօտեցաւ հրամանատարը, որ եկել էր հրաժեշտալու զինւորներին։ Նա մօտենալով, նախ քան խօսելը, երկար կանգ առաւ և գլուխը հակեց՝ սքօղելով ներքին յուզումը. բայց յանկարծ խզելով մեռելային լոռւթիւնը, որ իշխում էր իր շուրջը՝

— Տղէքք,—ասաց նա,—եկայ տխուք լուր հաղորդելու ձեզ։ Պէտք է բաժանենք իրարից։ Մեզ նախազգուշացրին, թէ այլևս կարիք չաւնին մեզ, և թէ կարող ենք ցըւել։ Ես չեմ ուզում

այստեղ յիշատակել ձեր բոլոր քաջագործութիւնները պատերազմի երկու տարւայ ընթացքում։ Մենք խօսքի մարդ չպէտք է լինենք, այլ գործի։ Դուք աչ մի դէպքում ի դերև չհանեցիք ձեր վրայ դրած յոյսերը, դուք բարձր պահեցիք մեր անունը, մեր համբաւը։ Մեր պարտականութիւնն էր կուել, աղատել Տաճկաստանի մեր եղայրներին, պաշտպանել մեր Հայրենիքը,— դուք կատարեցիք այդ, ազնւաբար տանելով ձեր գործը։ Նրանք, որ այլևս կարիք չունին մեր աջակցութեան, ուրիշ պատճառներ պէտք է ունենան հրաժարւելու մեր համագործակցութիւնից։ Թերևս կը դայ մի օր, երբ մենք բացատրութիւն կը պահանջենք այդ վարմունքի համար...

Լաեց։ Նա դժւարանում էր խօսել, և նրա ձայնի սովորաբար հնչեղ շեշտը կարծես խեղդւած էր։

— Գնացէք, տղէրք, — շարունակեց նա, — վերադարձէք ձեր տեղերը, ձեր օջախները, քանի որ կառավարութիւնն այլևս կարիք չունի ձեզ։ Ես շեմ կարող պահել ձեզ։ Բայց մի քնէք, տղէրք, պատրաստ եղէք իմ առաջին նշանին, որովհետեւ հեռու չէ այն ժամանակը, երբ Հայրենիքը դարձեալ պէտք կունենայ ձեզ, և այն ժամանակ դուք պատրաստ պէտք է լինէք զէնքի դիմելու, դարձեալ արիւն թափելու, որպէսզի հնարաւոր լինի քանդակել Ազատութիւն բառը։

Անմոռանալի մի տեսարան պարզւեց աչքիս առաջ։ Այս ծանր մշուշի մէջ, որ իջնում էր Հայաստանի հողի վրայ, Մշոյ այս հիանալի դաշտում, քաջարի զինւորները, որ ոյժի մի հըզոր տպաւորութիւն էին թողնում, ազգային գոյներով դրօշակը պարզած՝ զօրանցք էին կատարում Եփրատի կազմած ժապաւէնի շուրջը, որ փայլում էր մեղմիկ ու արծաթանման։

Սրանք Հայաստանի զաւակներից կազմւած խմբեր էին, բաղկացած միայն իրենց հայրենիքի հողի վրայ պատերազմի երկար ամիսներում կուի սովոր և կոշտացած զինւորներից։ Նրանցից իւրաքանչիւրն ընդունակ է ամենամեծ քաջութեան, ամենամեծ զոհաբերութեան և ամեն մէկն ապացուցել է իր՝ մարտիկի արիութիւնն ու ազնւութեամբ համակւած հոգին։

Եւ երբ տեսայ վէս ու վճռական կերպարանքով այն խմբերի զօրանցքը, հասկացայ, որ Հայաստանը մեռած չէ, որ նա ապրում է, որ նրա երակներում դեռ հերոսական արիւն է հոռում...

Մի ազգ, որ այդպիսի զաւակներ ունի, չէ մեռնի երբէք...

Վ Ե Ր Զ

8 ԱՆԿ

P R I V

1.	Հանապետութիւն	3
2.	Մռւշ	10
3.	Ցառաջ	21
4.	Ղըզըլաղաճ	30
5.	Հետափխուղութիւն	41
6.	Ասւրբ Յովհաննու վերելքը	54
7.	Ընդհարում	63
8.	Ալէքսանդրի մակը	70
9.	Քրդական երաժշտութիւն	73
10.	Կայուց	73
11.	Հայ կնոջ սիրութ	96
12.	Հրաժելա	102



P.S.U.8

四百九

9	Տիգարանական	1
91	Համար	2
92	Համար	3
93	Համար 1955:	4
94	Տիգարանական	5
95	Ազգային պատկերասրբ	6
96	Համար 1955:	7
97	Կազմակերպություն	8
98	Համար 1955:	9
99	Կազմակերպություն	10
100	Ազգային պատկերասրբ	11



ԳԻՆԻ Է 60 ԿՈՊ.



NL0352368

«Ազգային գրադարան»

43143